Ազգ
Azg
1 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 157 (4537)
ISSN: 1829-1651

# Հերթական դիվերսիան կասեցվել է

ԼՂՀ պաշտպանության բանակի լրատվության եւ քարոզչության բաժնից տեղեկանում ենք, որ օգոստոսի 31-ի լուսաբացին, մոտավորապես ժամը 6:30-ի սահմաններում ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գոտու հյուսիսարեւելյան ուղղությամբ (Վերին Չայլու գյուղի շրջանում) տեղակայված հայկական դիրքերից մեկի վրա հակառակորդի կողմից ձեռնարկվել է դիվերսիոն գործողության փորձ: Հայ դիրքապահները, ժամանակին հավաստանշելով թշնամու հատուկ նշանակության ջոկատայինների առաջխաղացումը, առանց վարանելու դիմել են համապատասխան քայլերի եւ հակառակորդին պատճառելով կորուստներ՝ հետ շպրտել իր ելման դիրքերը: Ծավալված մերձամարտի ընթացքում հրազենային վիրավորում է ստացել նաեւ ՊԲ շարքային զինծառայող, 1991 թ. ծնված Ռուդիկ Թովմասի Մանասերյանը:

Միջադեպի վերաբերյալ տարվում է հետաքննություն: Մանրամասները ճշտվում են:

# Որքա՞ն արժե սեպտեմբերի 1-ը

Վերջին տասնօրյակում քաղաքի բոլոր շուկաներում դպրոցական համազգեստից բացի այլ հագուստ գրեթե հնարավոր չէ գտնել: Մալաթիայի տոնավաճառի վաճառողուհի տիկին Ալվարդը առեւտրից գոհ է: Վերջին մի քանի օրվա ընթացքում ավելի շատ առեւտուր է արել, քան նախորդ մեկ ամսվա ընթացքում: «Յուրաքանչյուր ծնող ցանկանում է, որ իր երեխան գեղեցիկ ու նոր հագուստով ու պայուսակով գնա դպրոց: Առեւտրից գոհ եմ», ասում է նա: Նրա ներկայացմամբ՝ ծնողների ճաշակները տարբեր են: Շատերն են ընտրում համեստ ու էժան հագուստ, սակայն քիչ չեն նաեւ թանկարժեք հագուստ գնողները: «Հաճախ գնորդն այնքան էլ լավ հագնված չէ, երեւում է, որ նորմալ չի վաստակում, բայց երեխայի համար գնում է ամենաթանկ վերնաշապիկը», ասում է նա:


ՖՈՏՈԼՈՒՐ

Շքեղության մոլուցքն ու քաղքենիությունը երբեմն անցնում են բոլոր սահմանված չափերը: Սոնան 37039 առաջին դասարանցիներից մեկն է, որ այսօր առաջին անգամ հաճախելու է դպրոց: Մայրիկը նրա համար գնել է վարդագույն պայուսակ, գեղեցիկ կոշիկ, դպրոցական համազգեստ, մազակալներ, տետրեր, գունավոր մատիտներ, ալբոմ ու գրիչներ: Ընդհանուր առմամբ մոտ 50.000 դրամ արժողությամբ: Սակայն սրանով Սոնայի ծնողների նախապատրաստությունները չեն ավարտվում: Հատուկ այսօրվա համար Սոնայի մայրիկը սկսել է պատրաստվել 10 օր առաջ: Օպերատոր են կանչել, որ կլորիկ գումարով կանմահացնի Սոնայի առաջին մուտքը դպրոց:

Տես էջ 2

ՄԱՅՐ ԱԹՈՌ

# Ամենայն հայոց հայրապետն օրհնեց մանկավարժներին

Օգոստոսի 31-ին՝ Գիտելիքի օրվա նախօրեին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, Գարեգին Բ կաթողիկոսի գլխավորությամբ տեղի է ունեցել կրթության մշակների օրհնության կարգ, որով սկիզբ է դրվել մի նոր՝ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության: Զանգերի հանդիսավոր ղողանջների ներքո եկեղեցականների թափորը Գարեգին Բ-ի եւ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի ուղեկցությամբ, մտել է Մայր տաճար, ուր կատարվել է շուրջ 200 մանկավարժների օրհնության կարգը: Արարողությանը նաեւ ներկա են եղել ներկայացուցիչներ ԱԺ կրթության մշտական հանձնաժողովից, ԿԳՆ աշխատակիցները, ՀՀ մարզպետարանների կրթության վարչությունների պետերը, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրենները, Երեւանի եւ մարզերի դպրոցների ու մանկապարտեզների ներկայացուցիչներ, Մայր աթոռի կրթական հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան դպրանոցի, «Էօրնեկյան» հանրակրթական դպրոցի տեսչության անդամները:



ՖՈՏՈԼՈՒՐ

# «Իսկ այստեղ սպասելու ենք»

*ՀՀ նախագահը հանդիպել է մեդալակիրներ-շրջանավարտներին*

«Մասնագետների փոխայցելությունները ու շփումները, այդ թվում՝ առողջապահության ոլորտում, ոչ միայն որեւէ վտանգ, որեւէ վատ բան չեն պարունակում, այլեւ օգտակար են, քանի որ ժամանակակից աշխարհում պարփակվել, փորձել ամեն ինչ ինքնուրույն անել՝ ճիշտ չէ: Այլ խնդիր է, որ մենք պետք է կարողանանք շփվել մեր գործընկերների հետ որպես հավասարը՝ հավասարի: Այնպես որ, մաղթում եմ, որ համալսարանում ուսանելու տարիներին ձեռք բերեք գիտելիքներ, այնուհետեւ դառնաք լավ մասնագետ եւ մեր երկիրն արժանապատվորեն ներկայացնեք այդ շփումներում», այսպես է պատասխանել ՀՀ նախագահը ուսանողներից մեկին, երբ իր նստավայրում երեկ հյուրընկալել էր ՀՀ հանրակրթական դպրոցների 2009-2010 ուսումնական տարվա մեդալակիրներին, միջազգային առարկայական օլիմպիադաներում պարգեւների արժանացած դպրոցականներին եւ մաթեմատիկայի «Կենգուրու» մրցույթի հաղթողներին:

Շարունակելով՝ նախագահը նշել է. «Միանգամայն նորմալ երեւույթ է, անգամ՝ անհրաժեշտություն արտերկրում կրթություն ստանալը, հատկապես՝ որոշ մասնագիտությունների գծով, որոնց կարելի է տիրապետել միայն արտերկրում: Նույնիսկ Հայաստանում սովորածներին եւ ավարտածներին մեկ-մեկ խորհուրդ եմ տալիս վերապատրաստում անցնել նաեւ արտերկրում: Մենք խրախուսում ենք արտերկրում սովորողներին եւ պատահական չէ, որ այստեղ՝ նախագահական նստավայրում, հանդիպումներ ենք ունենում բոլոր այն ուսանողների հետ, ովքեր սովորում են արտասահմանի առաջնակարգ ուսումնական հաստատություններում: Մենք շատ շատերի համար սահմանում ենք կրթաթոշակներ: Մի բան ակնհայտ է՝ եթե կարելի է նույն մասնագիտությունը նույն որակով ստանալ թե՛ Հայաստանում, թե՛ արտերկրում, իհարկե, նախընտրելի է սովորել Հայաստանում: Իսկ եթե այդ հնարավորությունները մենք չունենք, միայն կարելի է ողջունել եւ խրախուսել արտերկրում կրթություն ստանալը: Սակայն շատ կարեւոր է, որ գիտելիք ստանալուց հետո վերադառնաք հայրենիք: Եթե ստացած գիտելիքները հնարավոր չէ հայրենիքում կիրառել, ապա որեւէ վատ բան ես չեմ տեսնում, որ երիտասարդ մասնագետը, իր գիտելիքները փորձի կիրառել արտերկրում, այնուհետեւ վերադառնա Հայաստան: Այդպիսի դեպքեր էլ են լինում: Ես ասացի, որ մեր արմատներն այստեղ են, մեր հայրենիքն այստեղ է, եւ յուրաքանչյուր հայ պետք է մտածի, թե ե՞րբ է վերադառնալու իր արմատներին, ե՞րբ է վերադառնալու հայրենիք, որովհետեւ հայրենիքը միշտ սպասում է իր զավակներին:

# Հայաստանցին ձերբակալվել է Վրաստանի սահմանում

Վրաստանի սահմանը ապօրինի հատելու համար ՀՀ քաղաքացի Համլետ Ադամյանին սպառնում է մինչեւ 5 տարվա ազատազրկում: «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ՝ Վրաստանի սահմանային ոստիկանությունը ձերբակալել է 2008-ի հոկտեմբերի 22-ին ռուս-վրացական սահմանը՝ Մցխեթ-Մթիանեթի շրջանում հատելու համար: Հիշեցնենք, որ 2007-ից Ռուսաստանը փակել է Վրաստանի հետ սահմանը, հետեւաբար Ռուսաստանի տարածքից քաղաքացիների մուտքը Վրաստան դիտարկվում է որպես ապօրինի: Իր հերթին՝ վրացական «Գռուզի օնլայն» պարբերականը նշել է. «Հաճախ հայաստանցիները մուտք են գործում Վրաստանի օկուպացված տարածքներ, իսկ այնուհետեւ՝ Վրաստանի մնացյալ տարածքներ՝ վարչական սահմանների չպահպանվող հատվածներով»:

Հ. Ա.

# Խորհրդարանական լսումներ՝ հանձնաժողովների ԲՀԿ-ական նախագահների նախաձեռնությամբ

Ազգային ժողովի լրատվական ծառայության փոխանցմամբ՝ երեկ տեղի է ունեցել ԱԺ եվրոինտեգրման եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովների նիստ, որը համատեղ վարել են հանձնաժողովների նախագահներ Նաիրա Զոհրաբյանն ու Արամ Սաֆարյանը: Որոշվել է սեպտեմբերի 23-ին կազմակերպել խորհրդարանական լսումներ՝ կառավարության ներկայացրած «Հասարակական կազմակերպությունների մասին» եւ հարակից երկու օրենքներում փոփոխությունների թեմայով: Հիշեցնենք, որ ՀԿ-ների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների որոշ դրույթներ արժանացել էին հասարակական սեկտորի բացասական արձագանքին:

Մ. Խ.

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

# Համբիկ Սասունյանին դարձյալ մերժել են

Ուեսթվուդում (Լոս Անջելես, ԱՄՆ) 1982-ին թուրք դիվանագետի սպանության գործում իր դերակատարման համար բանտարկված Համբիկ (Հարրի) Սասունյանին դարձյալ մերժել են վաղաժամկետ ազատել բանտից, տեղեկացնում է «Բեւեռլի Հիլզ կուրիեր» թերթը, որտեղից «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթն է արտատպել լուրը:

Նախկինում Փասադենայում ապրող Սասունյանին մեղավոր էին ճանաչել ԱՄՆ-ում թուրք հյուպատոս Քեմալ Արիքանին սպանելու հանցանքով եւ ցմահ բանտարկության դատավճիռ կայացրել առանց պայմանական ազատման հնարավորության: Դաշնային վճռաբեկ դատարանը, բեկանելով դատավճիռը, հնարավորություն էր տվել ժամկետից շուտ ազատ արձակման, սակայն մինչեւ օրս նրան չի հաջողվում օգտվել այդ հնարավորությունից, հակառակ որ 2002-ին նա ստորագրել է մի հայտարարագիր, որով դատապարտում է ահաբեկչությունը: Հաջորդ անգամ նա դատավճռի վերանայման խնդրանքով կարող է դիմել միայն 2013 թվին:

# Սեպտեմբերի 1-ից Թուրքիան կգլխավորի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը

Թուրքական «Անկա» լրատվական գործակալությունը հաղորդում է, որ սեպտեմբերի մեկից Թուրքիան, որը 2009 թվականին երկամյա ժամկետով ընտրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ժամանակավոր անդամ, մեկամսյա ժամկետով կղեկավարի ԱԽ-ն: Այս լիազորությունը Թուրքիան ստանում է ռոտացիոն կարգով՝ ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ Ռուսաստանից:

# Հիմի՞ էլ լռենք...

*Հերթական «օկուպացվածը» կդառնա ՄԱԿ-ի բանաձեւ, իսկ Հայաստանն էլի միայն դիտորդ է*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Միջազգային անցուդարձին հետեւելիս ավելի հաճախ հղումների կարելի է հանդիպել, քան բովանդակության: Սիրում են միջազգային կազմակերպություններն ու ընդհանրապես միջազգայնորեն գործող կառույցները, նաեւ անհատները մի քայլ անելուց առաջ հիշատակել բազմաթիվ նորմեր, թղթեր, փաստաթղթեր, հոդվածներ ու դրանց նման դրույթներ, որոնցով ամրագրվում ու հիմնավորվում է հաջորդ քայլը:

Ու այս համատեքստում որքան էլ անկարեւոր կամ երկրորդական լինեն տվյալ իսկ պահին քննարկվող փաստաթղթային նախագծերը, դրանք այսպես թե այնպես, մի օր հայտնվելու են գուցե պակաս կարեւոր կամ, ընդհակառակը, շատ էլ կարեւոր փաստաթղթերի հիմքում ու արժանանալու են հղում ունենալու ճակատագրին: Ուստի որեւէ փաստաթուղթ, անկախ խորհրդատվական թե իրավական բնույթ ունենալուց, չի կարելի արհամարհել, հատկապես որ այդօրինակ մի ձեւակերպում ի շահ, ասենք, Հայաստանի հաստատապես փողհարվելու հեռանկարով կներկայացվի:

Հերթական անգամ, հերթական հակահայկական ձեւակերպումներով ՄԱԿ-ի 64-րդ նստաշրջանի օրակարգում կարող է հայտնվել ու քննարկվել, նաեւ ընդունվել մի բանաձեւի նախագիծ, որ շրջանառության մեջ է դրել Ադրբեջանը՝ ՄԱԿ-ում, ըստ էության, ուզածն անցկացնելու մոտեցումը ապացուցված ներկայացնելով: Ու մինչ Հայաստանից էլի խելացի ու անխելք միասին կփորձեն բացատրել, թե խորհրդատվական բնույթ ունեցող փաստաթուղթ կարող է ընդունվել, հարկ կլինի կրկին հիշեցնել, որ միջազգային փաստաթղթերի մի զգալի մասը հենց այդ բնույթով էլ խնդրահարույց ու պահանջող են դառնում տարբեր երկրների գլխին, երբ վերջիններս ժողովրդավարության կուրսից շեղումներ են ունենում:

Տես էջ 2

# ՀՅԴ-ն նոր որակի իշխանություն է ուզում

Երեկ ասուլիս հրավիրած ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ **Արմեն Ռուստամյանը** կրկին խոսեց «Զարգանալ՝ չզիջելով» կարգախոսի մասին, որը ՀՅԴ-ն որդեգրել է և՛ սեպտեմբերի 2-ին Արցախի անկախության առթիվ կազմակերպվող հանրահավաքում, և՛ ՀՅԴ խմբակցության պատգամավորական գործունեության ուղենիշ որպես: Ըստ Ռուստամյանի՝ Հայաստանը պետք է Ղարաբաղի հարցում չզիջելով՝ միաժամանակ զարգանա, երկիրը կարող է եւ պարտավոր է զարգանալ՝ առանց զիջելու պետական եւ ազգային շահերն ու նպատակները: Դրա համար էլ պետք է վերանա օլիգարխիկ համակարգը, սոցիալական արդարություն ու ժողովրդավարություն հաստատվի, արտաքին քաղաքականության ազգային կուրս վարվի, եւ որակապես նոր իշխանություն ձեւավորվի:



Ադրբեջանը հակամարտության կարգավորումը փորձում է Մինսկի խմբին զուգահեռ այլ ձեւաչափեր փոխադրել, Հայաստանը եւս պետք է նոր զուգահեռ գործողություններ անի, ասենք՝ ջանքեր գործադրի ԼՂՀ միջազգային ճանաչման ուղղությամբ, թուրք-ադրբեջանական տանդեմին հակադրի Հայաստան-Ղարաբաղ տանդեմը՝ Ղարաբաղի հետ ռազմաքաղաքական դաշինքի տեսքով. այս առումով ԼՂ ճանաչման եւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման միջեւ բանախոսը նմանություն գտավ՝ երկուսն էլ միջազգային ջանքեր եւ ճանաչում են պահանջում: Իսկ Հայաստանի իշխանությունը վախվորած քայլեր է անում նշված ուղղությամբ՝ ընդամենը ներքին սպառմանն ուղղված հայտարարություններ, մինչդեռ արտաքին աշխարհին ուղղված հստակ եւ կոնկրետ քայլեր են պետք:

Ղարաբաղի հետ ռազմաքաղաքական դաշինքի կնքումը կնշանակի Ղարաբաղի անվտանգության երաշխավորի դերի ստանձնում Հայաստանի կողմից: Ա. Ռուստամյանը, որ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն է, կարծում է, որ հայ-թուրքական գործընթացը խորացրել է տարածաշրջանում պատերազմի վտանգը, իրար ավելի մոտեցրել Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերը:

Իսկ ահա հայ-ռուսական նոր համաձայնագրի կնքումը Ա. Ռուստամյանի համար շատ տրամաբանական է. եթե անվտանգության այլ երաշխիքներ լինեին, հենց վաղն էլ ռուսական բազաները Հայաստանից հանելու հարց կդրվեր, բայց կա՞ այդպիսի երաշխիք՝ որեւէ մեկն այդպիսի երաշխիք չի կարող տալ: Ռուստամյանը նաեւ միջազգային իրավունքի տեսակետից ճիշտ է համարում Ղարաբաղի փախստականների հարցի բարձրացումը՝ փոխհատուցման պահանջով, պետք է նաեւ վերաբնակեցնել ազատագրված տարածքները, օդանավակայան գործարկվի՝ այդ բոլորը կատարված փաստ կմատուցի հարկավոր ատյաններին: «Հայաստանը գտնվում է մի աշխարհաքաղաքական իրավիճակում, որն ունի, լավ թե վատ, ինչ-որ անվտանգության համակարգ... Ես տրամաբանական եմ համարում, որ քանի դեռ անվտանգության նոր համակարգ չկա, հինը պետք է ամրապնդել: Այս տրամաբանության մեջ տեղավորվում է այն, ինչ կատարվեց, ես նկատի ունեմ հայ-ռուսական պայմանագիրը: Պայմանագիրը նոր որակի վրա է բարձրացնում՝ հնի հետ համեմատած, մեր անվտանգության երաշխիքները, եւ դա ամենակարեւոր չափանիշներից մեկն է»:

Առաջիկա խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների առումով Ա. Ռուստամյանը կանխատեսեց, թե խորհրդարանական ընտրությունները շատ լարված են լինելու, այդ լարվածությունը նաեւ անցնելու է նախագահական ընտրություններին: Ըստ նրա՝ ժողովուրդը պատրաստ է երկարատեւ պայքարի, որի արդյունք կարող է լինել իշխանափոխությունը, սակայն արագ լուծումներ պետք չէ ակնկալել: Որեւէ իշխանություն, մինչեւ Ղարաբաղի հարցում զիջումներից խոսելը՝ պետք է երկրում համերաշխության եւ միասնության մթնոլորտ ձեւավորի, դա կարող անել նոր որակի իշխանությունը: Այդպիսի իշխանություն ՀՅԴ-ականը չի տեսնում եւ իր կուսակցության խնդիրը նա տեսնում է այդ որակի իշխանության ձեւավորման հասունացումը Հայաստանում:

Ա. Ռուստամյանը տեղեկացրեց նաեւ, որ Հայ դատի բոլոր գրասենյակներին հանձնարարված է լոբբիստական աշխատանքներ իրականացնել ՄԱԿ-ի անդամ երկրների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու ԼՂ խնդրի իրականությունն ու հորդորելու կողմ չքվեարկել ադրբեջանական հակաղարաբաղյան բանաձեւին:

**Ս. Խ.**

# Լույս է տեսել Մուշեղ Միքայելյանի «Ազատամարտ» գիրքը




«Դրօշակի» մատենաշարով լույս է տեսել գրող, հրապարակախոս Մուշեղ Միքայելյանի «Ազատամարտ» գիրքը: Մուշեղ Միքայելյանը սկսել է որպես «Ավանգարդի» աշխատակից, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հիմնադիրներից է եղել, 1991 թվականից խմբագրում էր ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազատամարտ» թերթը, իսկ ավելի ուշ, մինչեւ իր մահը ԿԳ փոխնախարար էր: Գրքում ամփոփված են հիմնականում Մ. Միքայելյանի խմբագրականները, որոնք փոխանցում են ժամանակի քաղաքական իրականության պատկերը: Գրքի առաջաբանը գրել է արձակագիր Ռուբեն Հովսեփյանը. «Թերթեք արդեն պատմություն դարձած այդ համարները, կարդացեք այդ համարների պարունակությունը եւ կտեսնեք, որ Մուշեղը դրանց մեջ թե կա, թե չկա: Չկան նրա անուն-ազգանունը, ստորագրությունը եւ ոչ մի խմբագրականի, հոդվածի տակ... Նրան ճանաչողը, հիշողը կզգա այն շունչն ու հանգը, այն համն ու հոտը, այն սրամտությունն ու սարկազմը, հարցականներով պատասխաններ հուշող ոճը, որ միայն Մուշեղինն էին, Միքայելյան Մուշեղինը»:

**Ս. Խ.**

# Որքա՞ն արժե սեպտեմբերի 1-ը

*1-ին էջից*

«Երկու մեծ տորթ եմ թխել, բանանով, անանասով, դեղձով ու տանձով մեծ զամբյուղ պատրաստել, 3 կիլոգրամ շոկոլադ եմ գնել, բնական հյութեր ու սուրճ: Աղջիկս առաջին անգամ է դպրոց գնում, պետք է հիշի այդ օրը», ասում է Սոնայի մայրը՝ **Գայանեն**: Քաղցրավենիքով լի սեղանը պետք է հիշեցնի Սոնային առաջին մուտքը դպրոց, թե Սոնայի մասին լավ հիշողություններ կունենան այդ սեղանից օգտված ուսուցիչները: Բացի քաղցրավենիքից՝ Գայանեն մոտ 30.000 դրամի երկու մեծ ծաղկեփունջ է գնել՝ ուսուցչուհու եւ տնօրենի համար:

Երեկոյան արդեն սեպտեմբերի 1-ը կնշեն հարազատներով՝ ավանդական կերակրատեսակներով ու խմիչքով լի սեղանի շուրջը: Երեկոն կեզրափակվի շքեղ հրավառությամբ, որի համար Սոնայի հայրը՝ Արշակը ծախսել է 26.000 դրամ: Ընդհանուր առմամբ Սոնայի սեպտեմբերի 1-ը նշելու համար ծնողները ծախսել են շուրջ 200.000 դրամ գումար: Թե որքան է կազմում ընտանիքի բյուջեն, ծնողները հստակ թիվ չասացին: Միայն նշեցին, որ մայրն աշխատում է քաղաքապետարանում, հայրը բժիշկ է:

Ավելի համեստ են նշում սեպտեմբերի 1-ը Գոհարի ծնողները: Նրանց ծախսերը չեն գերազանցում 30.000 դրամը: «Իհարկե, կցանկանայինք առավել մեծ ծախսեր անել, ավելի թանկարժեք հագուստ գնել, լավ ծաղկեփունջ, տորթ տանել՝ ուսուցիչներին հյուրասիրել, սակայն այդքան հնարավորություն չունենք, հետեւաբար սահմանափակվում ենք քչով: Դեռ պետք է երեխայի համար գրքեր էլ գնենք», ասաց Գոհարի մայրը՝ Կարինեն:

Այսօր Սոնան դպրոց կգնա 15.000 դրամանոց շրջազգեստով, իսկ Գոհարը՝ 5.000, ու հենց այդ շրջազգեստից էլ կսկսվի «ես լավն եմ, դու վատն ես, որովհետեւ էժան հագուստ ես կրում» մոտեցումը: Ի տարբերություն այլ երկրների, ուր յուրաքանչյուր դպրոց իր համազգեստն ունի եւ գոնե հագուստի առումով աշակերտների մեջ տարբերություն չի դրվում, Հայաստանում ծնողներն անգամ պարտքով գումար են վերցնում, որ իրենց երեխան մյուսներից հետ չմնա:

**Հ. Հ.**

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆՈՐ ԲԱՆԱՁԵՎԸ ՄԱԿ-ՈՒՄ

# Հիմի՞ էլ լռենք...

*1-ին էջից*

**«Միջազգային հումանիտար եւ մարդու իրավունքների միջազգային նորմերի պահպանումը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» անվանումը կրող բանաձեւի նախագիծը, որ, որոշ տեղեկությունների համաձայն, կարող է քննարկման առարկա դառնալ սեպտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հերթական՝ 64-րդ նիստում, ի հայտ է եկել դեռեւս հուլիսի սկզբներին, սակայն հայկական կողմից, կարծես, տեղից շարժվելու նշաններ չէին երեւում ու մինչ օրս էլ չկան:**

**«Իրադրությունը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» օրակարգային կետը Ադրբեջանի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի օրակարգ մտավ դեռեւս 2004-ին, ինչի հիման վրա, «քանի դեռ լուծված չէ օկուպացված տարածքներին առնչվող խնդիրը», Ադրբեջանը կարող է հարցին առնչվող բանաձեւերի նախագծեր ներկայացնել ՄԱԿ:**

**Նոր ներկայացված նախագծում հիշատակվում են ՄԱԿ-ի շրջանակներում արդեն իսկ ընդունված ադրբեջանական բանաձեւերը, մասնավորապես 2006-ի եւ 2008-ի բանաձեւերը «Իրավիճակը Ադրբեջանի օկուպացված տարածքներում», որոնցում կոչ էր արվում «անհապաղ դուրս բերել հայկական զինուժը Ադրբեջանի օկուպացված տարածքներից»:**

**Ինչեւէ, նոր բանաձեւի 10 կետից բաղկացած նախագծի համաձայն, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան վերահաստատում է «Լեռնային Ղարաբաղից եւ հարակից՝ հակամարտությունից ազդեցություն կրած շրջաններից արտաքսված բնակչության եւ նրանց ժառանգների՝ իրենց տներ վերադառնալու անքակտելի իրավունքի իրականացման կարեւորությունը»: Նախագծով, որը տվյալ դեպքում Ադրբեջանի ցանկության ու շահերի արտահայտությունն է, նշվում է, թե «բոլոր այն միջոցները, որ ձեռնարկվել են միակողմանիորեն փոփոխելու հակամարտությունից ազդեցություն կրած շրջանների ֆիզիկական բնույթը, ժողովրդագրական կազմը, ինստիտուցիոնալ կառուցվածքն ու կարգավիճակը, իրավական ուժ չունեն եւ լուրջ խոչընդոտ են հակամարտության կարգավորման բանակցությունների համար»:**

**Բանաձեւի նախագծով ընդգծվում է նշվող տարածքներում «մշակութային ժառանգության պահպանման, անհայտ կորած մարդկանց խնդիրների լուծման կարեւորությունը»: Այս նախագծում Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպությանը (ԵԱՀԿ) առաջարկվում է «շտապ կարգով իր անդամ երկրների համապատասխան փորձագիտական գիտելիքներով ներկայացուցիչների բազմազգ փաստահավաք առաքելություն ուղարկել հակամարտության տարածաշրջան՝ հետաքննելու եւ զեկույց ներկայացնելու միջազգային մարդասիրական եւ մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում միջազգային չափանիշների պահպանման վիճակի վերաբերյալ»:**

**ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից էլ, ըստ բանաձեւի նախագծի, պահանջվում է Գլխավոր ասամբլեայի հաջորդ նստաշրջանին բազմակողմանի զեկույց ներկայացնել տվյալ բանաձեւի կատարման վերաբերյալ: Իսկ վերջին կետով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, ըստ նախագծի, կարող է որոշել «Իրավիճակն Ադրբեջանի օկուպացված տարածքներում» կետ մտցնել հաջորդ նստաշրջանի օրակարգ:**

**Այս ամենից առավել հետաքրքրականն ու թերեւս զարմանալին այն է, որ Հայաստանում այս բանաձեւի նախագծի ու դրա ընդունման առնչությամբ մի տեսակ հանգիստ իրավիճակ է տիրում, այն էլ ամենաբարձր մակարդակով:**

**Մասնավորապես, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն անգամ չի բացառել այդ բանաձեւի ընդունումը: Նախագահը Լեռնային Ղարաբաղ այցելությանը՝ դեռեւս օգոստոսի 29-ին հայտարարել է. «Այո, հավաստի տեղեկություններ կան, որ ադրբեջանցիները ՄԱԿ-ի գլխավոր նստաշրջանի քննարկմանն են ներկայացնելու մի բանաձեւ (ամենայն հավանականությամբ սեպտեմբերի 9-ին), որի ընդունվելը կամ չընդունվելը չի կարող էական ազդեցություն ունենալ Արցախի եւ Հայաստանի ոչ քաղաքական, ոչ տնտեսական կյանքում, ոչ էլ անվտանգության բնագավառում: Այդ բանաձեւին հավանաբար կողմ կքվեարկեն մի քանի տասնյակ երկրներ: Թերեւս այն երկրները, որոնք մշտապես համերաշխություն են ցուցաբերում Ադրբեջանի հետ. առաջին հերթին դրանք Իսլամական կոնֆերանսի կազմակերպության երկրներն են»:**

**Սարգսյանը վստահություն է հայտնել, թե բոլոր այն երկրները, որոնք ցանկանում են, որպեսզի այդ հարցը լուծվի խաղաղ ճանապարհով եւ բանակցությունների միջոցով, դեմ են քվեարկելու այս բանաձեւին: «Առնվազն գոնե ձեռնպահ են մնալու, որովհետեւ նրանք շատ լավ գիտակցում են, որ այդպիսի բանաձեւերի ընդունումը չի կարող որեւէ դրական ազդեցություն ունենալ բանակցային գործընթացի վրա:**

**Սա՝ մի հանգամանք, եւ երկրորդ հանգամանքը՝ կարծում եմ, շատերի համար պարզ է, որ Ադրբեջանը հերթական անգամ կոպիտ սխալ է թույլ տալիս, եւ այդ կոպիտ սխալը մենք պետք է օգտագործենք մեր նպատակներին հասնելու համար: Ակնհայտ է, որ մեր կողմից եւս քայլեր կլինեն, եւ այդ քայլերը մեզ կմոտեցնեն մեր նպատակին»:**

**Ըստ նախագահի՝ «Մեր գործունեությունը մշտապես պետք է ուղղված լինի նրան, որ ոչ միայն Ադրբեջանը, այլեւ մնացած երկրները համոզված լինեն, որ հետդարձի ճանապարհ չկա, որ որեւէ կերպ բացառվում է Ղարաբաղի վերադարձն Ադրբեջանի կազմ, որ Արցախն արդեն իսկ կայացած պետություն է, միգուցե փոքր, միգուցե դեռեւս պրոբլեմներով լի, բայց պետություն է, եւ այս պետությունն ամրապնդվելու, զարգանալու է»:**

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մահը մեզնից խլեց եւս մի արժանավոր մտավորականի՝

**Վռամշապուհ Զիհանյանին:**

Լեզվաբան, բանասիրական գիտությունների թեկնածու, ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող եւ ըստ ամենայնի զարգացած անձնավորություն էր նա, ազնիվ, անկաշառ եւ հայրենասեր:

«**Ազգի**» խմբագրությունը *խորապես վշտակցում է տիկնոջը, մյուս հարազատներին եւ ընկերներին:*

*Հուղարկավորության եւ թաղման վերաբերյալ մանրամասնությունները կհաղորդենք առաջիկայում:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **ԱՆՑՈՒԴԱՐՁ**

# Թեղուտի խնդիրը հասավ ... Լոնդոն

Թեղուտի անտառների խնդիրն արդեն մի քանի տարվա պատմություն ունի: Այնտեղ պղնձամոլիբդենային հանքավայր շահագործելու նպատակով արդեն ծախսվել է 40 մլն դոլար եւ հատվել 50 հա անտառ: Հանքավայրի շահագործումից գուցե կառավարությունը ստանա շահույթ առավելագույնը 10-15 տարի: Թեղուտցին էլ մի քանի տարի 80.000 դրամ աշխատավարձով աշխատանք կունենա, իսկ հետո՞: Մոլիբդենը կվերջանա, համապատասխան մարդիկ գերշահույթ կստանան, իսկ հողին կառչած գյուղացին կմնա կոտրած տաշտակի առաջ, ու իրեն օրվա հացով ապահովող բնությունն ու հողն արդեն վերածված կլինեն անապատի: Արդյոք արժե՞ մի քանի տարվա համար կացնահարել «թեղուտցիների հացը», վտանգի տակ դնել բնակչության կյանքը: Եթե իշխանությունները Թեղուտում հանքավայրի շահագործման ծրագիրը հովանավորելով եւ աջակցելով ընկնում են ոչ թե ժողովրդի հաշվին հերթական գերշահույթ ստանալու հետեւից, այլ մտահոգվում գյուղացու ճակատագրով, ապա լավագույն լուծումը Թեղուտում գյուղատնտեսություն զարգացնելն է, օգնել գյուղացուն ոտքի կանգնել ու հող մշակել:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործումից Լոռու մարզում ոչնչացված անտառների թիվն ահռելի է: Եթե այս ծրագիրը շարունակվի, ապա վերանալու են բացառիկ բուսական եւ կենդանական տեսակներ, էկոհամակարգեր: Պոչամբարում տեղակայվելու են 500 մլն տոննա պոչանքներ եւ 600 մլն տոննա թունավոր թափոններ, թունավորման վտանգի առաջ են կանգնելու գետերն ու ջրագոյացման աղբյուրները:

Բնապահպանների տեղեկացմամբ` Թեղուտ եւ Շնող գյուղերի բնակիչներից տեղական գերակա շահի անվան տակ հողը խլվել է 1 քմ-ն ընդամենը 40 դրամով: Հանքարդյունաբերական ծրագրի անօրինականությունն այժմ վիճարկվում է ՀՀ դատարանում եւ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեում:

Թեղուտի հանքավայրի շահագործման վտանգի մասին բազմիցս բարձրաձայնվել է: Այն տպավորությունն է, որ բնապահպանության նախկին նախարարից հասնում էր կառավարության որոշման տակ դնել իր ստորագրությունն ու դրանով սահմանափակվել, հաջորդած նախարար Արամ Հարությունյանին էլ` հայտարարել, որ խնդիրն իր նախարարության օրոք չի բարձրացել, որ ինքը չի ստորագրել, եւ դրանով ձեռքերը լվանալ ու մի կողմ քաշվել: Եվ հոգ չէ, որ թեղուտցին դեմ է իր անտառների ոչնչացմանը, կամ միջազգային բազմաթիվ կազմակերպություններ ամեն օր ահազանգում են, որ Հայաստանը էկոլոգիական վտանգի առաջ է կանգնած, եւ Թեղուտի անտառների ոչնչացումն ավելի կսրի իրավիճակը: Այս ու էլի մի շարք բնապահպանական հարցերի համար նախարարն ունի մի պատասխան` No Comment:

Թեղուտում 12 տարի պղնձամոլիբդենային հանքավայր շահագործելու նպատակով ՎՏԲ բանկը մտադիր է 250 մլն դոլարի վարկ տրամադրել ԷյՍիՓի ընկերությանը: Բնապահպանների առաջարկությանը` հանդիպել ու զրուցել բանկի կառավարչի հետ, նույնպես ապարդյուն էր:

Թեղուտի խնդիրը հասավ անգամ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի ականջին: Բնապահպան մի շարք ակտիվիստներ Մեդվեդեւին վերջերս Հայաստան կատարած այցելության ժամանակ նամակ փոխանցեցին` արտահայտելով մտահոգությունն ու խնդրեցին նախագահին բանկից պահանջել դադարեցնել Թեղուտում հանքավայրի շահագործմանը ծրագրի ֆինանսավորումը: Սակայն եթե Հայաստանի տեղական կառույցների ղեկավարները հիմնականում չեն արձագանքում նամակներին ու չեն էլ հետաքրքրվում երկրի բնապահպանական խնդիրներով, ապա ինչո՞ւ պետք է Ռուսաստանի նախագահն այդ խնդրով մտահոգվի. Մեդվեդեւին ուղղված նամակն էլ մնաց անպատասխան:




Բնապահպան ակտիվիստների հաջորդ կանգառն ու բողոքի ցույցը Եվրոպական վերակառուցման եւ զարգացման բանկի (EBRD) երեւանյան գրասենյակի դիմաց էր: 2009թ. հունվարին կնքված պայմանագրի համաձայն` EBRD-ն 10 միլիոն դոլար էր տրամադրելու ՎՏԲ բանկին` Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման համար: Ըստ բնապահպանների` EBRD-ն հրաժարվել էր վարկավորել Թեղուտում հանքավայրի շահագործման ծրագիրը` հաշվի առնելով վերջինիս բնապահպանական աղետալի հետեւանքները, սակայն շարունակում է համագործակցել ՎՏԲ բանկի հետ: Երեկ ընկերության գրասենյակի առաջ բնապահպանները պահանջում էին EBRD-ի տնօրենությունից հիշել, որ իրենց ղեկավարած ընկերությունը բացառիկ բնապահպանական մանդատ ունի, հարգել իր սկզբունքները եւ դատապարտել ՎՏԲ-ի դիրքորոշումը:

Բնապահպան ակտիվիստները հանդիպեցին Վերակառուցման եւ զարգացման բանկի երեւանյան գրասենյակի ղեկավար Վալերիու Ռազլոգինի հետ: բնապահպանները ներկայացրել են Թեղուտի խնդիրն ու ընդգծել, որ ՎՏԲ բանկի հետ համագործակցելով անուղղակիորեն հովանավորում է Թեղուտի անտառի ոչնչացման ծրագիրը: Ռազլոգինն էլ խոստացել է, որ նամակը կփոխանցի Լոնդոն, եւ կուսումնասիրեն խնդիրը: Նա ընդգծել է, որ Թեղուտի հարցի կապակցությամբ ունի մտահոգություններ: Ակցիայի մասնակիցներն էլ նշեցին, որ եթե ՎՏԲ բանկը չվերանայի իր դիրքորոշումը, ակցիաներն ավելի մեծ մասշտաբով կկայանան: Հիշեցնենք որ շուրջ մեկ ամիս առաջ բնապահպանները բողոքի ակցիա էին կազմակերպել ՎՏԲ բանկի երեւանյան գրասենյակի դիմաց, սակայն նրանց որեւէ մեկը չընդունեց:

Հ. Հ.

# Ելփինի բնակիչները դեմ են գյուղում երկրաբանահետախուզական աշխատանքների սկսմանը

Օգոստոսի 28-ին Վայոց ձորի մարզի Ելփին գյուղում տեղի ունեցած քննարկման ժամանակ համայնքի ավագանին արգելել է գյուղապետին «Արգամիկ» ընկերության հետ համայնքի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներ անցկացնելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրել:

Ելփինի գյուղում սկսված կոնֆլիկտն արդեն մեկ ամսվա պատմություն ունի: Բնակիչների մտահոգությունները սկսվեցին, երբ գյուղ ծանր տեխնիկա մտավ: Պահանջներին` ներկայացնել փաստաթուղթ, վերոնշյալ ընկերության ներկայացուցիչները ցույց տվեցին էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի ստորագրությամբ արտոնագիրը, որտեղ «թույլատրված աշխատանքներ» կետի դիմաց գրված էր` Ելփին գյուղում պղնձամոլիբդենային երեւակումների քարտեզագրում:

Նախկինում գյուղում անցկացվել են ուրանի որոնման աշխատանքներ: Այժմ բնակիչները վախենում են, որ հորատումները կարող են դիպչել ուրանային երեւակումներին:

Ավագանու առարկությունները իրավաբանական հիմնավորում ունեն: Արտոնագիրը օգտագործողի իրավունքների սահմանափակման մեջ նշված է, որ աշխատանքները չեն կարող անցկացվել առանց գրավոր համաձայնության. եթե տարածքը տեր ունի: Այս պարագայում տարածքի տերը Ելփին համայնքն է: Տարածքում կան պատմական հուշարձաններ, խաչքարեր, գերեզմաններ: Այնտեղ է գտնվում գաճաճ կեչիների յուրահատուկ պուրակը, բնակվում են «Կարմիր գրքում» գրանցված կենդանիներ: Այժմ ավագանու խորհուրդը դիմում է պատրաստում ուղղված կառավարությանը` տարածքին հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ տալու պահանջով:

Հ. Հ.

ՀԵՌԱԿԱՊ

# Հեռախոսներ եւ զանգեր ընդամենը մեկ դրամով

*Orange-ում լավ բաները շարունակվում են*

Նոր ուսումնական տարվան ընդառաջ` «Օրանժը» երեկ հայտարարեց երկու աներեւակայելի առաջարկների մասին. առաջիկա երկու ամսվա ընթացքում նոր հեռախոսներ եւ զանգեր ընդամենը մեկ դրամով:

«Սեպտեմբերի 1-ը իսկական տոն է Հայաստանում, եւ մենք նշում ենք այս նոր սկիզբը բոլորի հետ: Վաղը բազմաթիվ երեխաներ եւ երիտասարդներ կսկսեն ուսումնական տարին, իսկ ոմանք առաջին անգամ կգնան դպրոց կամ համալսարան: Շնորհավորում ենք բոլորին այս մեծ




տոնի կապակցությամբ եւ ցանկանում մեծ հաջողություններ: Իսկ մենք այս առթիվ անմոռանալի նվեր ենք պատրաստել բոլոր համար», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Մինչեւ հոկտեմբերի 31-ը Orange-ի հաճախորդները կարող են ձեռք բերել հատուկ Orange-ի համար արտադրված եւ բրենդավորված Nokia, Samsung եւ Alcatel նոր հեռախոսներ ընդամենը 1 դրամով` պարզապես որեւէ Orange խանութում լիցքավորելով հաշիվը 8000 կամ 12000 դրամով: Լիցքավորված ողջ գումարը բաժանորդները կարող են օգտագործել Orange-ի ցանկացած ծառայությունից օգտվելու համար մինչեւ 2011թ. մարտի 1-ը:

«Այս առաջարկը թույլ կտա հեշտությամբ փոխել հեռախոսը եւ ձեռք բերել նորը: Սա մեր «սեպտեմբերյան» նվերն է մեր բոլոր բաժանորդներին, ինչպես նաեւ բոլոր նրանց, ովքեր դեռ չեն հասցրել Orange հեռախոսահամար ձեռք բերել: Վստահ ենք, որ ուսանողները եւ բոլոր նրանք, ովքեր որոշել էին նոր հեռախոս ձեռք բերել եւ հարմար առաջարկի էին սպասում, կգնահատեն մեր առաջարկած լուծումը», ասաց Orange-ի մարկետինգի տնօրեն **Արամ Մկրտչյանը**:

Այսքանով աշնանային անակնկալները Orange-ում չեն ավարտվում: Նոր ուսումնական տարվա սկզբի առթիվ Orange-ն ունի եւս մեկ հրաշալի նվեր: «Խոսենք» եւ «Ամեն ամիս» ծառայությունների բոլոր բաժանորդները սեպտեմբերի 1-ի ամբողջ օրվա ընթացքում կարող են զանգեր կատարել դեպի շարժական կամ ֆիքսված հեռախոսակապի բոլոր տեղական ցանցեր ընդամենը 1 դրամ/րոպե սակագնով: Ավելին, նույն 1 դրամ/րոպե սակագինը կգործի մինչեւ հոկտեմբերի 31-ը դեպի բոլոր Orange համարներ կատարված զանգերի համար:

# «Արդշինինվեստբանկը» եւ MoneyGram-ը սկսում են հերթական համատեղ ակցիան

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», բանկը MoneyGram միջազգային դրամական փոխանցումների համակարգի հետ համատեղ, սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը կանցկացնի հերթական ակցիան, որին կմասնակցեն բոլոր նրանք, ովքեր MoneyGram համակարգով կիրականացնեն 200 եվրո կամ 200 դոլարից ավելի գործարք: Մասնակիցները կստանան պատահական շերտով քարտ, որի միջոցով կարող են շահել 3000 դրամ: Ընդ որում` 200 դոլարից կամ 200 եվրոյից մինչեւ 999 դոլարի կամ 999 եվրոյի յուրաքանչյուր գործարքի դեպքում մասնակիցները կստանան մեկ շահող քարտ, 1000 դոլարի կամ 1000 եվրոյի գործարքի դեպքում` 2 քարտ, իսկ դրանից ավելի յուրաքանչյուր 500 դոլարի կամ 500 եվրոյի գործարք կատարելու դեպքում կստանան եւս մեկ լրացուցիչ քարտ: Շահող եւ չշահող բոլոր քարտերի կտրոնները յուրաքանչյուր ամսվա վերջում կմասնակցեն խաղարկության, որի հաղթողին կտրամադրվի 200 000 դրամ:

Ակցիայի շրջանակներում կխրախուսվեն նաեւ բանկի MoneyGram համակարգը սպասարկող լավագույն աշխատակիցները, որոնք, համաձայն իրենց սպասարկած գործարքների քանակի, կարժանանան գումարային պարգեւների:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանն այդ առթիվ ասել է. «Ուրախ ենք մեր հաճախորդներին պարբերաբար մատուցել հաճելի անակնկալներ: Հատկանշական է, որ «Արդշինինվեստբանկը» MoneyGram միջազգային դրամական փոխանցումների համակարգից, անցած տարվա դեկտեմբերին արժանացավ հավաստագրի` որպես ամենահուսալի հայկական բանկ: Մենք շարունակելու ենք համագործակցությունը MoneyGram-ի հետ` որպես վստահելի եւ կայուն գործընկերոջ»:

Ա. Մ.

# Հանքավանում ծառեր են հատվել

Օգոստոսի 30-ին «Էկոլուրի» մոնիտորինգային խումբն այցելել է Կոտայքի մարզ: Հանքավանի «Տաք ջրեր» կոչվող տեղամասի անտառում չէր դադարում կացնի եւ սղոցի ձայնը: «Մի երիտասարդ ջանասիրաբար կացնահարում էր անտառի ծառերը: Շրջելով անտառում` տեսանք բազմաթիվ կտրված ծառեր, կոճղեր, գետնին ընկած թարմ ճյուղեր: Նկատելի էր, որ տարածքը չի վերահսկվում», ասված է «**Ազգ**» օրաթերթին ուղղված հաղորդագրության մեջ:

Նրանք այս նյութը բնութագրում են Անտառային մոնիտորինգի կենտրոնին ուղղված ահազանգ, որը կոչված է վերահսկելու անօրինական ծառահատումները, սակայն թեժ գիծ չունի, ու հայտնի չէ, թե ո՞ր հեռախոսահամարով պետք է նրանց դիմել խախտումների մասին տեղեկացնելու համար:

Հ. Հ.

# Նաեւ ի խնդիր օտար հանրային կարծիքը ճիշտ կողմնորոշելու

## *Հարցազրույց Բեյրութի «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանդահարյանի հետ*

***Մեր այսօրվա հյուրը՝ Շահան Գանդահարյանը, Բեյրութի «Ազդակ» ազգային, հասարակական-քաղաքական օրաթերթի խմբագրապետությունն ստանձնել է 2002 թվականից: Բեյրութահայ երիտասարդ մտավորականը տեղի Հայկազեան համալսարանի քաղաքական գիտություններին զուգահեռ հետեւել է նաեւ պատմագիտության դասընթացներին, մագիստրատուրան ավարտել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, քաղաքագիտության դոկտորական թեզը պաշտպանել Ամերիկյայի Մարդկային գիտությունների համալսարանում:***

***Սփյուռքի ամենաերկարակյաց սակավ օրաթերթերից մեկը՝ «Ազդակը» հիմնադրվել է 1927 թվականին. Հայկ Պալյանը եղել է հիմնադիրը, սեփականատերն ու առաջին խմբագիրը: Սկզբնական եռօրյա պարբերականը 1932-ից դարձել է օրաթերթ, 1965-ից ՀՅԴ Լիբանանի շրջանային պաշտոնաթերթն է: Ի սկզբանե թերթի՝ սփյուռքահայության ազգային հասարակական հիմնախնդիրներին ուղղված ծառայությունները շարունակում են նաեւ մեր օրերում. օրաթերթը տպագիր եւ էլեկտրոնային տարբերակներով շարունակում է իր հիմնական նպատակը՝ հայապահպան առաքելությունը, ըստ որում մամուլի ճգնաժամային ներկա փուլում մշտական կանոնավոր տասը էջերին հավելյալ լույս ընծայելով նաեւ մանկական («Պզտիկ-Մզտիկ») եւ գրական հավելվածներ, նաեւ հոբելյանական բացառիկ թողարկումներ ունի:***

***Մեր զրույցը Շահան Գանդահարյանի հետ՝ թերթի ընթացիկ գործունեության, ավանդույթների շարունակման եւ նորի ստեղծման, առհասարակ ներկա պայմաններում գոյատեւման մասին՝ ստորեւ: (Զրուցակիցս խոսում էր գրեթե արեւելահայերեն, մեջ ընդ մեջ արեւմտահայերեն որոշ արտահայտություններով):***

**- Պրն Գանդահարյան, այսօր Հայաստանում էլ հեշտ չէ, բայց հասկանալի է սփյուռքում շատ ավելի դժվար է օրաթերթի տեւական գոյություն ապահովել: Ի՞նչ մեխանիզմներ են գործում եւ ի՞նչ սկզբունքներով է աշխատում թերթը՝ բովանդակային եւ տեխնիկական առումներով:**

- Թերթն ունի իր սեփական տպարանը եւ ցրումի սեփական համակարգը, ցրվում է բաժանորդներին, գրախանութներ եւ այլն, ամենօրյա դրությամբ առավոտյան շատ կանուխ ժամերի թերթը հասցնում ենք նաեւ Սիրիա, տեղի հայ գաղութը օրաթերթ չունի եւ փաստորեն «Ազդակը» երկու համայնքների օրաթերթի հանգամանք է ստացել: Շուրջ 44 աշխատակից ունի թերթը (ստեղծագործական եւ տեխնիկական): Գոհունակությամբ կարող եմ ասել, որ լրագրողների կարեւոր մասը երիտասարդներ են՝ հայագիտական բարձրագույն հիմնարկի շրջանավարտներ եւ սա թերթի ապագայի, շարունակելիության առումով լավատեսական նախադրյալ է, անշուշտ:

**- Ընթացիկ տեղեկատվությունը միջազգային եւ տեղական (լիբանանյան) իրադարձությունների շու՞րջն է:**

- Այո՛, եւ հասկանալի այնպիսիք, որոնք առնչված են սփյուռքահայ կամ լիբանանահայ գաղութներին, բայց հիմնականը տեղական լուրեր են: Կարեւորության հատուկ էջ ունենք նաեւ համայնքի գործունեության վերաբերյալ: Լիբանանը, կարելի է ասել՝ հակառակ քաղաքացիական պատերազմի եւ դրա որոշ հետեւանքների, դեռեւս համասփյուռքյան որոշակի կառույցների կենտրոնն է, այստեղ են գործում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, Հայկազեան համալսարանը, Ավետարանական եւ Կաթողիկե համայնքների կենտրոնները եւ այլն: Սրանք կառույցներ են, որոնք միայն տեղական գործունեությամբ չեն զբաղվում, այս առումով Լիբանանը համասփյուռքյան նշանակություն ունի:

**- Եվ, բնականաբար, ձեր թերթը պետք է անդրադարձներ ունենա այս ամենին:**

- Հարկավ, եւ դրանով արդեն բավական լայն հասանելիություն ապահոված է թերթին, քանի որ ներգրավված շրջանակները կփնտրեն թերթը, որովհետեւ իրենց գործունեությունն այնտեղ արձագանք կգտնե:

**- Կնշանակի ընթերցողական լսարանից դժգոհ չե՞ք:**

- Հասկանալի, երբ տպագիրին առընթեր էլեկտրոնայինը կա: Եվ օբյեկտիվ գնահատական տալու համար ասեմ, որ սա մեր թերթի հաջողությունը չէ միայն: Քաղաքացիական պատերազմի բերումով շատ մեծ զանգված արտագաղթեց Լիբանանից եւ ծագումով լիբանանցի հայեր, որոնք դրսում են ապրում, գաղութի հետ իրենց կապը պահում են նաեւ մեր թերթի ճանապարհով:

Այս առումով բավական համընդգրկուն լսարան ապահովեց «Ազդակը». այսօր թերթի կայքէջի ընթերցողների քանակը գերազանցում է տպագիր տարբերակի ընթերցողների թվին (ներառյալ Սիրիան՝ 3 հազար օրինակ)՝ միջին հաշվով օրական հասնելով 6 000-7 000-ի, երբեմն 10 000-14 000-ի: Ե՛վ դրսի, ե՛ւ ներսի ընթերցողները հիմնականում հետաքրքրված են համայնքային կյանքին առնչվող նյութերով: Իհարկե, կա օբյեկտիվ պատճառ եւս՝ ներհամայնքային իրադարձությունների, տեղեկությունների օպերատիվ անդրադարձումները կամ վերլուծումները՝ թղթակցություններով կամ մեկնաբանություններով, հատուկ «Ազդակինն» են՝ միջազգային, տեղական կամ թեկուզ հայաստանյան լուրերի այլընտրանքային հանգամանքով պայմանավորված, դրանք մնում են եզակի:

Բնականաբար, միջազգային, ինչպես նաեւ լիբանանյան քաղաքականությունը, եւ հասկանալի հայկական հարցերին առնչված միջազգային իրադարձությունները մեր ուշադրության կենտրոնում են եւ, անշուշտ, հայաստանյան լրատվությունն՝ ամենօրյա: Հայաստանի մեր թղթակից, արտաքին քաղաքական վերլուծումներ կատարող Թաթուլ Հակոբյանն ամեն շաբաթ հատուկ «Ազդակի» համար վերլուծական ռեպորտաժներ կպատրաստե երկու ոլորտների վերաբերյալ՝ հայ-թուրքական հարաբերության եւ ղարաբաղյան հակամարտության: Սա էական է այն առումով, որ այս կարեւորագույն խնդիրների վերաբերյալ սեփական թղթակցություն-վերլուծականը կունենանք բավականին օբյեկտիվ ձեւով: Ունենք նաեւ մշակութային, տնտեսական, մարզական, կրոնական, լեզվական եւ այլ հարցերի վերաբերող նյութեր:



**- Դատելով այս ամենից, բավականաչափ իրազեկ եք տեղի համայնքային կյանքին, ինչպիսի՞ն է ընդհանուր վիճակը սփյուռքի հայկական նախկին ամենահոծ համայնքում:**

- Լիբանանահայ համայնքի մասին որեւէ բնութագրում անելիս, պետք է նկատի ունենալ, որ հետպատերազմյան իրավիճակի մեջ ապրող երկիր եւ համայնք է: Պատերազմի եւ դրան հետեւած սոցիալ-տնտեսական խնդիրները շարժառիթ են դարձել, որպեսզի որոշակի արտահոսք լինի, հասկանալի Մ. Նահանգներ եւ Կանադա, որոշակիորեն նաեւ Եվրոպա եւ Ավստրալիա: Այդ հոսքը որոշակի վնաս է հասցրել համայնքի մտավոր ուժին եւ կազմակերպվածությանը: Հիմա կարելի չէ բացառել, որ արտագաղթի երեւույթ չկա, բայց համեմատաբար ավելի նվազել է, որոշակի հաղթահարված են սոցիալ-տնտեսական դժվարությունների հետեւանք բարոյահոգեբանական անկումային տրամադրությունները:

Կարեւորագույն համալսարանների գոյությունը Լիբանանում խրախուսում է, որ ուսանող խավը մնա երկրում եւ հաճախի տեղի լավագույն կրթարաններ՝ ե՛ւ ամերիկյան, ե՛ւ ֆրանսիական, ինչպես նաեւ՝ Հայկազեան: Կան նաեւ այնպիսիք, ովքեր գնում են դուրս՝ մասնագիտությունը կատարելագործելու: Բայց խնդիրն այն է, թե գնացող խավը ինչ համեմատությամբ վերադառնում է: Զուտ ստատիստիկներ չկան: Իհարկե, ոչ բոլորն են վերադառնում եւ դա զգացվում է:

Ես կարծում եմ, որ հատուկ ճանաչողականության պակաս կա՝ Հայաստանի կրթական ոլորտի, բարձրագույն ուսման համակարգի եւ, կարծում եմ, որ բավարար տեղակացվածությունը (պայմաններ, ուսման վճար, կրթաթոշակ եւ այլն) կրնա խթան հանդիսանալ որոշ տրամադրություններ ստեղծելու՝ լիբանանահայ երիտասարդների մոտ՝ հայաստանյան համալսարաններում ուսումը շարունակելու համար:

**- Հետաքրքրական է նաեւ, թե տնտեսական ու սոցիալական ներկայիս պայմաններում թերթը նյութական ի՞նչ միջոցներով է գոյատեւում:**

- Առաջինը, իհարկե, սպառումն է՝ թերթի բաժանորդները, սա հաստատուն թիվ է եւ շատ չի տատանվում: Իսկ հիմնականում՝ գովազդներն ու նվիրատվություններն են: Գովազդը կապված է լիբանանյան շուկայական հարաբերությունների հետ, եթե կայուն է երկիրը քաղաքականապես, բնականաբար, գովազդային ճանապարհը եկամտաբեր է: Բայց, կարծում եմ, ոչ միայն «Ազդակը», որեւէ հայկական թերթ չի կարող այսօր հենվել սպառողի կամ գովազդի վրա եւ գործունեությունը պետք է ընդարձակի մյուս եկամտաբեր ձեռնարկների վրա:

**- Ինչպիսի՞:**

- Հատուկ համախմբումների, ճաշկերույթների, հանգանակությունների, նվիրատվությունների: Արեւմուտքի, հասկանալի տպագիր թերթերը, անգամ ամենախոշորները ճգնաժամի մեջ են եւ կան այնպիսիք, որ սպառելու համար արտակարգ միջոցների են դիմում՝ վիճակախաղեր են կազմակերպում, նվիրատվություններ խոստանում, նշանակում է, որ տագնապ է, եւ ճգնաժամը միջազգային առումով է:

Երբ դասական հասկացողությամբ այսպիսի թերթերն են ճգնաժամի մեջ, ուր մնաց հայաստառ, այն էլ՝ արեւմտահայերենով լույս տեսնող թերթը: Արտակարգ իրավիճակ է եւ այն հաղթահարելու համար արտակարգ միջոցներ են պետք:

**- Ի՞նչ եք կարծում, նկատի ունենալով թեկուզ վերը նշված թվերը՝ թերթի ընթերցողական լսարանին վերաբերող եւ էլեկտրոնային թերթերի աճի արագ տեմպերը, արդյոք տպագիր թերթն իր մայրամուտը չի՞ ապրում:**

- Շատ եմ մտածել այդ հեռանկարի մասին, որովհետեւ վիճակագրությունը կտիպե: Սակայն օբյեկտիվ լինելու համար երեւույթը առավել խորքային դիտարկել է պետք: Այդ 3 000 տպագիր օրինակը չի ենթադրում միայն 3 000 ընթերցող. թերթը տուն կամ խանութ որ մտավ, առնվազն 3 ընթերցող է ունենում: Սա արդեն 9 000-ի է հասցնում թիվը: Իսկ էլեկտրոնային պարագայում նույն ընթերցողը կարող է մի քանի անգամ այցելել կայքէջ, մանավանդ որ կայքէջում տեղական կամ հայաստանյան լուրերը պարբերաբար թարմացվում են:

Այս հարաբերությամբ կնվազի էլեկտրոնային տարբերակի ընթերցողների քանակը եւ հակառակը կբարձրանա տպագիրը, չէի ասի, իհարկե, թե՝ կգերազանցի: Երկրորդ հանգամանքը՝ ռադիոյի գյուտը երբ եղավ, սկսեցին մտածել՝ թերթը կգոյատեւի՞, թե՞ ոչ, նույնը՝ հեռուստատեսության եւ ինտերնետի պարագայում: Փաստը մնաց փաստ, որ ե՛ւ թերթը մնաց, ե՛ւ ռադիոն, ե՛ւ հեռուստատեսությունը: Զանգվածային լրատվամիջոցները շարունակում են գոյատեւել, թեեւ նախկին հասանելիությունը չունեն:

Էլեկտրոնայինի պարագային եւս մեկ անպատեհություն կա՝ նկատի ունեմ տեղեկատվական պատերազմի հանգամանքը: Պետք է մտածել տեղեկատվական անվտանգության մասին: Գոնե «Ազդակը» 4 անգամ Թուրքիայի եւ Ադրբեջանի հակերների հարձակումներին ենթարկվեց: Այս տարվա ապրիլի 24-ին, երբ նախապատրաստվում էինք օրվա բացառիկը թողարկել՝ ամբողջ աշխարհում տեղի ունեցած ցեղասպանությանը նվիրված արարողությունների, ցույցերի, հիշատակի ձեռնարկների, հոգեհանգիստների, Ծիծեռնակաբերդի բոլոր իրադարձությունները համախմբել համարի մեջ եւ երբ նյութերը տեղադրեցինք կայքում, թուրքերը հարձակվեցին եւ քանդեցին, առավոտյան, իհարկե, մի քանի ժամ անց վերականգնվեց:

**- Ձեր թերթն ունի նաեւ բացառիկ թողարկումներ եւ առանձին հավելվածներ: Այս մասին մի քանի խոսք, խնդրեմ:**

- Ավանդական 2 բացառիկ համարներ կան. առաջինը՝ Ամանորյա, որ ամփոփում է հայկական հաստատությունների, համայնքների, բարեսիրական, ընկերային, մշակութային, մարզական գործունեությունը, նաեւ՝ քաղաքական իրադարձությունները: Երկրորդը՝ Ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ համարն է, որին աշխատակցում են ոչ միայն լիբանանահայ մտավորականներ, նաեւ Հայաստանի եւ սփյուռքի այլ գաղութների: Երկուսն էլ հատորների տեսքով առանձին հրատարակություններ են:

Ինչ վերաբերում է հավելվածներին՝ նախապես ունեինք կանացի («Անահիտ») եւ մարզական («Նավասարդ») հավելվածները, այժմ ունենք գրական եւ մանկապատանեկան՝ «Պզտիկ-Մզտիկը», որը հաջողություն ունեցավ եւ բավականին տարածում գտավ: Մյուսը գրական հավելվածն է: Կարծում եմ՝ այսօր զուտ գրական թերթի սպառողը բավականին սահմանափակ է: «Ազդակի» գրական հավելվածը իբրեւ ներդիր անվճար է, ցրվում է թերթի հետ եւ տեղադրվում կայքէջում, դա նպաստում է առավել հասանելիության: Որովհետեւ հասանելիությունն ապահովելու համար այսօր անգամ շատ գեղարվեստ կամ շատ բովանդակալից գրական ամսագրի սպառումը սահմանափակ է: Թերեւս գրական հանդեսները պետք է երիտասարդ խավին հետաքրքրող թեմաներ եւս ընդգրկեն, որպեսզի որոշակի կենդանություն առաջանա եւ պահանջարկ զգացվի:

**- «Ազդակը» հին եւ անցյալի ավանդույթներ ունեցող թերթ է, սփյուռքում ճանաչված մտավորական այնպիսի խմբագիրներ է ունեցել, ինչպես Մուշեղ Իշխան, Կարո Սասունի, Գասպար Իփեկյան, Անդրանիկ Ծառուկյան, Պողոս Սնապյան եւ ուրիշներ, ինչպիսի՞ն է ընթացքը ավանդույթների շարունակության եւ նորի ստեղծման:**

- Իհարկե, նախկինները՝ ե՛ւ խմբագրակազմը, ե՛ւ գլխավոր խմբագիրները հեղինակություններ են եղել եւ իրենց ժամանակի գործը շատ մեծ ձեռնհասությամբ եւ բարեխղճորեն արել են: Այսօր փոխվել են պայմանները, թեմաներն արծարծելու ձեւերը փոխվել են, տեխնոլոգիաներն են փոխվել. պիտի քայլ պահել: Եվ միայն այդ հսկա ժառանգության տեր կենալը չի բավարարի: Մենք պետք է ունենանք նաեւ դրական առումով հավակնությանը նորություններ ստեղծելու, լսարաններ կազմակերպելու, տարբեր լրատվամիջոցների հետ կապ հաստատելու: Այսօր հստակ աշխատանք կա հակառակորդի կողմից ապատեղեկացնելու հայությանն առնչված խնդիրները: Մենք պետք է ոչ միայն հակադարձենք, այլեւ նախաձեռնենք ճիշտ կողմնորոշելու նաեւ օտար հանրային կարծիքը: Պետք է այսօրվա հայ լրագրողական շրջանակների հետ ուժերի համախմբում լինի: Սա շատ կարեւորում եմ, որովհետեւ քարոզչական եւ այլ նպատակով թե՛ Ադրբեջանը, թե՛ Թուրքիան միացյալ, համակարգված աշխատանք են տանում: Մենք աշխարհի բոլոր երկրներում կառույցներ ունենք, մեր թերթերը մեր տեղեկատվական կենտրոններն են, եւ Հայաստանի հետ համակարգված այդ աշխատանքը պետք է անպայման իրականացնել:

Կարծում եմ, հոկտեմբերին սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունենալիք խորհրդաժողովը քննարկելու է այս հարցերը եւ համապատասխան միջոցների դիմելու է: Սա է գլխավոր խնդիրը:

Զրույցը վարեց
ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

# Հազիվ թե Ադրբեջանն ու Թուրքիան պատասխանատվություն վերցնեն Սաակաշվիլու ժառանգության համար

Այս տարվա հուլիսի 18-ին Վրաստանի նախագահ **Միխեիլ Սաակաշվիլին** Բաքվում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ բանակցություններից հետո կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց, որ Վրաստանն ու Ադրբեջանը պետք է հաստատեն կոնֆեդերատիվ հարաբերություններ, քանի որ նրանց հարաբերությունները միջպետականից ավելին են: «Մեր երկրները միմյանց շարունակությունն են, միմյանց ավարտականությունը եւ մի օրգանիզմի մասնիկները: Դժվար է պատկերացնել ավելի լավ հարաբերություններ, քան կան Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ», փաղաքշածայնեց Սաակաշվիլին:

Չասենք լայնորեն, սակայն ադրբեջանա-վրացական (հետագայում նաեւ՝ թուրքական) կոնֆեդերացիա ստեղծելու գաղափարը քննության առնվեց ռուսաստանյան լրատվամիջոցներում: Հիշյալ երկու երկրների քաղաքական-տնտեսական շահերը (անջատողականություն, էներգառեսուրսներ եւ այլն) մեծապես համընկնում են, եւ նման պայմաններում նրանց միջեւ կոնֆեդերատիվ հարաբերությունների հաստատումը այստեղ չեն բացառում. ի վերջո կոնֆեդերացիաների գլխավոր նպատակն է լուծել այն արտաքին քաղաքական ու ռազմառազմավարական խնդիրները, որոնք առնչվում են դաշինքի յուրաքանչյուր անդամի քաղաքական գոյությանն ու տարածքային ամբողջականությանը:

Այդուհանդերձ Ռուսաստանի քաղաքականագիտական միտքը ավելի շատ կասկածամտություն է դրսեւորում այդ գաղափարի իրագործման հարցում, թեեւ, թվում է, ակնհայտ է նման երկուստեք ձեռնտու մեխանիզմի օբյեկտիվ անհրաժեշտությունը: Ինտեգրացիոն գործընթացների գլխավոր խանգարիչ պարագան դիտվում է Ադրբեջանի եւ Վրաստանի աշխարհաքաղաքական անբավարարությունը, ինչպես էլ նրանք համարվեն տարածաշրջանի քաղաքական դաշտի «գլխավոր» խաղացողները: Արտաքին քաղաքական հզոր «ուժերը»՝ ի դեմս ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրամիության, Թուրքիայի եւ Իրանի, իրենց բազմաբնույթ շահասիրական նկրտումներով տարածաշրջանի երկրները մասնատում են ըստ ազդեցության ոլորտների, թուլացնում են ինտեգրացիոն խթանները, կամ էլ նրանցից յուրաքանչյուրն այդ գործընթացները փորձում է ներգրավել իր սեփական ինտեգրացիոն կառույցների մեջ: Որոշ մեկնաբաններ խնդրի խրթինությունը տեսնում են նաեւ Հայաստանի հետ այդ երկու պետությունների հակասական հարաբերությունների մեջ:

Ուշագրավ է, որ ադրբեջանա-վրացական կոնֆեդերացիայի կազմավորման գաղափարի հեղինակ այստեղ համարում են ԱՄՆ-ին, ելնելով այն բանից, որ Սաակաշվիլին այդ մասին հայտարարեց պետքարտուղար Հիլարի Քլինթոնի թբիլիսյան այցից հետո: Ադրբեջանում այդ նախաձեռնությունն ունի ե՛ւ կողմնակիցներ, ե՛ւ մերժողներ: Որոշ մասնագետներ դա համարում են սոսկ քարոզչական խաղեր, ուրիշները գտնում են, որ Ադրբեջանը Վրաստանի համար էապես գրավիչ է էներգաանվտանգության փաստացի ապահովման նկատառումներով: Սակայն ադրբեջանցիները նաեւ կասկածներ ունեն, որ նախաձեռնության սկզբնաղբյուրը Կրեմլում է, որն, իբր, առաջնորդվելով «բաժանիր եւ իշխիր» հնարահայտ սկզբունքով, փորձում է ավելի հզոր սեպ խրել անդրկովկասյան պետությունների միջեւ:

Այս իմաստով հետաքրքրական է ադրբեջանական գործակալության նորերս կայացած հարցազրույցը ռուսաստանյան լրատվական գործակալության գլխավոր խմբագիր, հարավկովկասյան տարածաշրջանի փորձագետ **Մոդեստ Կոլերովի** հետ: Այն հարցին, թե ինչքանո՞վ է իրական ադրբեջանա-վրացական-թուրքական կոնֆեդերացիայի ստեղծումը, եւ որ դա չե՞ն հրահրում այն ուժերը Մոսկվայում, որոնք ամեն կերպ պաշտպանում են Հայաստանն ու ադրբեջանական հողերի օկուպացումը, Կոլերովը պատասխանում է, որ դժվար է պատկերացնել, թե Մոսկվան ինչ կերպ կարող է ազդել Թբիլիսիի եւ Բաքվի, առավել եւս, Բաքվի ու Անկարայի հարաբերությունների, հենց Սաակաշվիլու վրա: Իսկ ինչ վերաբերում է կոնֆեդերացիա ստեղծելու վերջինիս մտահղացմանը, ապա Կոլերովն անմիջապես նշում է, որ այդ դաշինքում ի սկզբանե Վրաստանին կհատկացվի կրտսեր գործընկերոջ դերը: Փորձագետը լուրջ կասկածներ է հայտնում, թե Ադրբեջանն ու Թուրքիան կցանկանան ավելի շատ պարտավորություններ վերցնել իրենց վրա, քան կա տարանցիկ էներգափոխադրումների, Աջարիայի եւ Բորչալուի համար: Իսկ կոնֆեդերացիան, կոնկրետացնում է Կոլերովը, կնշանակի պատասխանատվություն վերցնել հենց Սաակաշվիլու ժառանգության համար:

Արժե մեջբերել նաեւ թեմայից դուրս ազերիների տված եւս մի հարց ու դրա, ես կասեի, հակիրճ, բայց տարողունակ պատասխանը.

«- Պատկերացնենք, որ Ադրբեջանը դուրս է գալիս բանակցային գործընթացից եւ փորձ է անում ռազմական ճանապարհով վերադարձնել օկուպացված տարածքների վերահսկողությունը: Այդ դեպքում ո՞րը կլինի իրադարձությունների զարգացման առավել հավանական սցենարը:

- Լոկալ պատերազմը կձգվի 3-5 օր: Ռազմաճակատի գիծը էապես չի փոխվի: Այսքանը»:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Մեքսիկայում ձերբակալվել է թմրաբարոն «Բարբին»

**Մեքսիկական թմրամաֆիայի պարագլուխ Էդգար Վալդես Վիլյառեալը, որը հայտնի է «Բարբի» մականունով եւ առավել խոշոր հանցագործներից մեկն է, երեկ ընկել է մեքսիկացի ոստիկանների ձեռքը: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ նա խոշորագույն թմրակարտելներից մեկի՝ «Բելտրան Լեյվայի» ղեկավարներից է:**

**Ոստիկանությունը նրան ձերբակալել է Մեքսիկոյի եւ Մորելոսի նահանգների սահմանագլխին: Ավելի վաղ Մեքսիկայի դատախազությունը նրան բռնողին խոստացել էր 2,26 մլն դոլար պարգեւավճար:**

**Անցյալ տարվա դեկտեմբերին զինվորականների հետ բախման ժամանակ սպանվեց կարտելի առաջնորդ Արթուրո Բելտրան Լեյվան: «Բարբին» հավակնում էր գրավել նրա թափուր տեղը, բայց մինչեւ վերջերս հակամարտ խմբավորումների արյունալի բախումները չէին դադարում:**



**Ռոյթեր գործակալությունը նշում է, որ Տեխասում ծնված «Բարբին» կարող է արտաքսվել ԱՄՆ, որտեղ նա մեղադրվում է մաքսանենգ ճանապարհով մի քանի հազար կգ կոկաին ԱՄՆ տեղափոխելու մեջ: Ամերիկացիները նրա ձերբակալմանն օժանդակողին խոստացել են 2 մլն դոլար:**

**Դիտորդները «Բարբիի» ձերբակալությունը համարում են մեքսիկացի իրավապահների մեծ հաջողություն: Նախագահ Ֆելիպե Կալդերոնը 2006-ի վերջերից պատերազմ է հայտարարել հանցաշխարհին՝ օգտագործելով բանակային խոշոր ստորաբաժանումներ: Սակայն ձեռնարկված միջոցները ցանկալի արդյունքը չեն տվել. երկրում բռնարարքների հետեւանքով ավելի քան 28 հազար մարդ է սպանվել:**

**Փորձագետների գնահատումների համաձայն՝ ամեն տարի Մեքսիկայի տարածքով ԱՄՆ, Եվրոպա եւ Ասիա անցկացվող թմրադեղերի ընդհանուր արժեքը մոտ 40 մլրդ դոլար է:**

# Խիստ պատժամիջոցներ ԿԺԴՀ-ի դեմ

ԱՄՆ-ը խստացրել է պատժամիջոցները ԿԺԴՀ-ի նկատմամբ: Բարաք Օբամայի վարչակազմը սառեցրել է հյուսիսկորեական մի շարք ընկերությունների եւ մասնավոր անձանց ամերիկյան ակտիվները, որոնք ըստ երեւույթին օժանդակում են Փենյանի միջուկային ծրագրին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Նոր պատժամիջոցները գործում են օգոստոսի 30-ից:

«Սեւ ցուցակում» հայտնվել են ԿԺԴՀ 4 քաղաքացիներ, որոնցից երկուսը կապված են ատոմային էներգիայի հյուսիսկորեական գործակալության հետ: Նախագահ Օբաման կարգադրել է սառեցնել նաեւ հյուսիսկորեական 3 ընկերությունների եւ 5 պետական հիմնարկների ակտիվները:

Պատժամիջոցների խստացման հնարավորության մասին առաջին անգամ խոսվել էր 2010-ի հուլիսին: Մասնավորապես պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Հարավային Կորեայում հայտարարել էր, որ պատժամիջոցները պետք է սահմանափակեն միջուկային ծրագիրը ֆինանսավորելու ԿԺԴՀ ղեկավարության հնարավորությունները:

Պատժամիջոցները կապված են նաեւ Դեղին ծովում մարտի 26-ին հարավկորեական «Չհոնան» պահականավի խորտակման հետ: 46 զոհ պատճառած խորտակումը բացատրվում է հյուսիսկորեական սուզանավի գործողություններով:

ԱՐՁԱԳԱՆՔ

# Սաֆար Աբիեւի «փայլուն զուգահեռները»

**Որ թուրք-ադրբեջանական ռազմական գործակցության պայմանագիրը, որը վերջերս թարմացվեց նախագահ Գյուլի՝ Բաքու կատարած այցի ընթացքում, հակակշիռ է մի քանի օր անց «հայ-ռուսական թարմացմանը», խոստովանում են նաեւ Բաքվում, ընդ որում՝ պաշտպանության երկարամյա նախարար Սաֆար Աբիեւի շուրթերով: «Ադրբեջանական կողմը թուրք-ադրբեջանական նոր պայմանագիրը համարում է հայ-ռուսական համաձայնագրին համարժեք»: Առհասարակ «համարժեք» բառը ենթադրում է «միեւնույն կշիռ» ունեցող, եթե չասենք միեւնույն բովանդակություն կամ սկզբունքներ: Սակայն՝ ոչ Ադրբեջանի պաշտպանության նախարարի կարծիքով: Այսպես. Աբիեւը նշել է, որ հայ-ռուսական արձանագրությունից հետո հայկական կողմից հնչած հայտարարությունները «թուլության եւ ոչ թե ուժի նշան են», «Դրանք քաղաքական եւ հոգեբանական բնույթ են կրում», նշել է Աբիեւը՝ հավելելով. «Մինչդեռ թուրք-ադրբեջանական համաձայնագրով նախատեսվում է, որ Անկարան ռազմական օգնություն կտրամադրի Ադրբեջանին»: Իսկ հիմա, ինչպես ասում են, եկեք գտնենք գոնե երեք տարբերություններ... որոնք չկան: Ադրբեջանի պաշտպանության նախարարի հայտարարությունները տարօրինակ են մի քանի առումներով, նախ. մի՞թե Աբիեւը տեղեկացված չէ, որ այնպես, ինչպես Անկարան ռազմական օգնություն կտրամադրի Բաքվին, այնպես էլ Մոսկվան՝ Երեւանին հավանական պատերազմի ժամանակ, հետեւաբար «թուլության» նշան չէ՞ արդյոք Բաքվի նմանօրինակ խոստովանությունը: Իսկ ամենակարեւորը եւ հետաքրքրականը Աբիեւի ելույթում հետեւյալն է՝ Ադրբեջանի պաշտպանական գերատեսչության ղեկավարը այս անգամ ոչ մի սպառնալիք չի հնչեցրել Հայաստանի, ավելի ճիշտ՝ հայկական կողմի հասցեին. ինչո՞ւ, երեւի այն պատճառով, որ արդեն դրանք ծիծաղելի կհնչեն անգամ Բաքվում:**

**Հ. ԱՓՅԱՆ**

# Մոսկվան պահանջում է քննել Մինսկի միջադեպը

**Մոսկվան պահանջում է մանրակրկիտ հետաքննել Մինսկում՝ ՌԴ դեսպանատան տարածքում տեղի ունեցած միջադեպը եւ պատժել մեղավորներին: ՌԴ ԱԳՆ-ն նման հայտարարություն է արել օգոստոսի լույս 31-ի գիշերը Մինսկում պատահած դեպքի առնչությամբ:**

**«ՌԴ դեսպանատան տարածք են նետվել հրկիզախառնուրդով երկու շիշ: Ձուս պատահականությամբ անձնակազմից որեւէ մեկը չի տուժել: Սակայն վառվել է «Մազդա» մակնիշի մի ավտոմեքենա», հաստատել են ՌԴ ԱԳՆ-ում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին տված հարցազրույցում:**

**«Տվյալ պատահարը համարում ենք զայրացուցիչ ակտ, որի հետեւում նկատվում է որոշակի ուժերի ձգտումը՝ խանգարել դեսպանատան բնականոն աշխատանքին եւ անվստահություն ու լարվածություն ստեղծել երկկողմ հարաբերություններում», նշել են ՌԴ ԱԳՆ-ում:**

# Գիշերային «չոր օրենք» Ռուսաստանում

**«Ազգը» գրել էր, որ սեպտեմբերի 1-ից Մոսկվայում կարգելվի թունդ ոգելից խմիչքների վաճառքը ժամը 22-ից մինչեւ ժամը 10: Իսկ ՌԴ մարզերը առայժմ ինքնուրույն են տնօրինում խանութներում ոգելից խմիչքի վաճառքի ժամերը:**

**2011-ի հունվարի 1-ից ամբողջ Ռուսաստանի տարածքում թունդ ոգելից խմիչքների գիշերային վաճառքը կարող է արգելվել: Այդ մասին հաղորդում է «Վրեմյա նովոստեյ» թերթը՝ նշելով, որ օրենսդրության համապատասխան ուղղումներն արդեն համաձայնեցված են եւ մոտ ժամանակներս կներկայացվեն Պետդումայի քննարկմանը:**

**Օրինագծով նախատեսվում է կեսգիշերից մինչեւ ժամը 8-ը արգելել ալկոհոլի, ներառյալ 5 աստիճանից բարձր թնդության գարեջրի վաճառքը: Արգելքը պետք է գործի ամենուրեք, բացի հասարակական սննդի կետերից:**

**Թերթը գրում է, որ Առեւտրի համաշխարհային կազմակերպության մասնագետները հանդես են գալիս արգելքի խստացման օգտին: Կազմակերպության փորձագետ Դարյա Խալտուրինայի խոսքերով, առաջարկված ուղղումները թույլ չեն տա «խզել կոռնծումների շղթան», ուստի անհրաժեշտ է վաճառքի արգելք սահմանել ժամը 22-ից մինչեւ ժամը 10:**

# Մոսկվայի լավագույն հավաքարարները կմեկնեն հանգստի՝ Կանարյան կղզիներ

Այս մասին, «Ինտերֆաքս»-ի փոխանցմամբ, հայտարարել են ՌԴ մայրաքաղաքի քաղաքային վարչությունից: Մոսկվայում անցկացվում է «Լավագույն հավաքարար» մրցույթ, որտեղ այս տարի հաղթել են 21 հոգի: «Նրանք բոլորը կմեկնեն իսպանական Կանարյան կղզիներ, իսկ հաջորդ տարվա մրցույթի հաղթողներին քաղաքապետարանը կտրամադրի նաեւ ընդհանուր 4 մլն ռուբլի պարգեւատրություն», նշել է քաղաքապետարանի աշխատակիցը՝ չմանրամասնելով, թե արդյոք այս տարվա հաղթողների մեջ կա՞ն միգրանտներ: Մոսկվայի ամենամաքուր թաղամասերի ղեկավարները նույնպես արժանացել են ճամփորդական ուղեգրերի, սակայն, ի տարբերություն հավաքարարների, ղեկավարները կհանգստանան Կառլովի Վարի հանգստավայրում:

Հ. Ա.

# Մոլորակի ջերմացման պնդումները սնանկ են ճանաչվել

**Երկրի կլիմայի տաքացմանը վերաբերող պնդումները, ինչպես պարզվում են, հիմնազուրկ են: Աշխարհի առաջատար գիտական հիմնարկների միավորման՝ InterAcademy Council (IAC)-ի անցկացրած հետազոտության արդյունքները վկայում են, որ ՄԱԿ-ին ենթակա Կլիմայի փոփոխության միջկառավարական փորձագիտական խմբի (IPCC)՝ ընդհանուր տաքացման վերաբերյալ արած պնդումները «այնքան էլ հիմնավոր չեն»: Այդ մասին հաղորդում է Daily Express թերթը: IPCC-ի հեղինակությանը «լուրջ վնաս» է պատճառված, հարցականի տակ է IPCC ղեկավար, դոկտոր Ռաջենդրա Պաչաուրիի կարիերայի հարցը:**

**Հետազոտության առիթը 2007-ին IPCC-ի հրապարակած զեկուցագիրն է: Վերջինս պարունակում է «չափազանցված եւ սխալ պնդումներ, թե Հիմալայների սառցադաշտերը կարող են հալվել մինչեւ 2035 թվականը»: IPCC-ն ստիպված էր խոստովանել, որ ընդհանուր ջերմացման գլխավոր դրույթը արտագրված է եղել 1999-ին քիչ հայտնի մի հնդիկ գիտնականի տպագրված հարցազրույցից, որը հետագայում իր իսկ պնդումները անվանել է «մտահայեցողական» եւ գիտական հաստատումից զուրկ:**

# Կրթություն

Օգոստոսի 3-ին Ֆրանսիական համալսարանի 29 դասախոսներ այսպիսի բովանդակությամբ նամակ ստացան ու առանց որեւէ բացատրության եւ հիմնավորման դարձան գործազուրկ: Համալսարանի ռեկտոր **Ժոել Լը Մորզլեկի** ներկայացմամբ՝ դասախոսների հետ աշխատանքային պայմանագրի ժամկետը չեն երկարաձգել, որովհետեւ հաճախ իրենց պահել են ուսանողի պես, ուշացել աշխատանքից, ուսումնական ծրագրերը, պլանները չեն ներ-

## «Շնորհակալություն գերազանց դասավանդման եւ նվիրվածության համար. Դուք ազատված եք աշխատանքից»



ARMENPRESS

կայացրել կամ պարզապես չեն բավարարել դասավանդման համար անհրաժեշտ պայմաններ: «Նրանց 2 ամիս առաջ եմ գրել այդ մասին, եւ բացի այդ՝ 48 օրվա համար աշխատավարձ վճարել», Արմենպրեսի մամուլի սրահում ասաց ռեկտորը:

Դասախոսներն էլ հավաստիացնում են, որ ռեկտորն իրենց նախապես ոչինչ չի ասել. աշխատանքից ազատման մասին տեղեկացել են նամակի միջոցով: 48 օրվա արձակուրդայինի փոխարեն էլ ստացել են մեկ ամսվա աշխատավարձ:

Ազատված դասախոսների աշխատանքային պայմանագիրն ավարտվել է 2008-ին, սակայն նոր պայմանագիր չեն կնքել՝ շարունակելով աշխատել ու աշխատավարձ ստանալ: Այս պարագայում նրանց աշխատանքային պայմանագիրը համարվում է անժամկետ ու իրավաբանական տեսանկյունից այլ կերպ պետք է լուծվեր:

Համալսարանի անգլերենի ամբիոնի վարիչ **Գայանե Հակոբյանի** ներկայացմամբ՝ ռեկտորի պատճառաբանությունները անհեթեթության շարքից են: «Եթե ցածրորակ մասնագետ լինեի, ապա երկու տարի անընդմեջ չէի ստանա վկայագրեր Բրիտանական խորհրդից»: Այս տարի ԱՄՆ մեկնելու համար դասախոսը խնդրել է համալսարանի վարչակազմին՝ երաշխավորագիր տալ: «Պրոֆեսիոնալ մակարդակը բարձր է, գիտելիքներն ու հմտությունը՝ կատարյալ: Անհամբեր սպասում ենք մեր աշխատանքների վերսկսմանը նրա հետ 2010-2011 ուսումնական տարում»: Հակոբյանը մեջբերում է ռեկտորի ստորագրությամբ ու կնիքով երաշխավորագիրը:

Սովորաբար աշխատանքից ազատման համար նախ դասախոսներն անցնում են ատեստացիա, եւ միայն հանձնաժողովի վճռի հիման վրա է ազատման որոշում կայանում:

«Մենք ատեստացիա չենք անցել», ասում է ֆրանսերենի մասնագետ **Նարինե Կոխսեեւան**: Նա պատմում է, որ կրճատման վերաբերյալ շշուկներ են լսել, զրուցել են համալսարանի վարչակազմի ներկայացուցիչների հետ, սակայն նրանց հանգստացրել են. լեզուների ամբիոնների դասախոսների կրճատումը բացառված է. ընդամենը պայմանագրերի ձեւն են փոփոխում:

Դասախոսներն էլ մեկնել են հանգստանալու եւ օգոստոսին կանգնել գործազուրկի կարգավիճակի փաստի առաջ:

Աշխատանքից ազատված 14 դասախոսներ արդեն դիմել են դատարան:

Նրանց իրավաբան **Մարաս Ասոմյանի** մեկնաբանությամբ՝ ռեկտորը զրպարտել է դասախոսներին: Առանց որեւէ փաստի նրանց վերագրել կարգապահական խախտումներ եւ անկոմպետենտություն: Եթե նման բան է եղել, ապա ռեկտորը կարող էր համապատասխան պատիժներ կիրառել աշխատանքային օրենսգրքի հիման վրա: «Ինչո՞ւ երբեւէ որեւէ դասախոսի կարգապահական պատասխանատվության չի ենթարկել ու հիմա այդ անվան տակ նրանց ազատում է աշխատանքից: Ասենք, դասախոսը երեք տարի առաջ է ուշացել աշխատանքից, ինչո՞ւ են նրան հիմա ազատում աշխատանքից»: Աշխատանքից ազատված դասախոսներից շատերը համալսարանում աշխատում են արդեն 10 տարի: Նրանք պնդում են, որ այդ ժամանակահատվածում որեւէ դիտողության չեն արժանացել:

Ֆրանսերենի մասնագետ **Անուշ Մխիթարյանին** զարմացնում է այն փաստը, որ մայիսին համալսարանն ու դեսպանատունը հսկայական գումար են ծախսել, որ նա Բուլղարիայում վերապատրաստվի: Մխիթարյանը ֆրանսերենի ամբիոնի այն 7 դասախոսներից է, որ մագիստրոսի 2 կարգի դիպլոմ ունի: «Եթե նրանք իմ պրոֆեսիոնալիզմը կասկածում էին, ապա ինչո՞ւ ուղարկեցին Բուլղարիա: Դրանից առաջ մի քանի տարի շարունակ տարվա մեջ երկու անգամ մասնակցել եմ եվրոպական երկրներում դասախոսների համար նախատեսված վերապատրաստումներին: Հիմա պարզվում է, որ ես անորա՞կ դասախոս եմ»:

Դասախոսները նամակներ են ուղարկել ՄԻՊ Արմեն Հարությունյանին, ով, ռեկտորի հավաստմամբ, այս ուսումնական տարվանից աշխատելու է համալսարանում, Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Սերժ Սմեսովին եւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին: Առայժմ որեւէ արձագանք չեն ստացել: Դասախոսներից շատերը փորձել են այլ վայրերում աշխատանք փնտրել, սակայն՝ ապարդյուն: Օգոստոսի կեսերին համալսարաններում դասաժամերն արդեն կազմած են լինում: «Սիրով կընդունեինք, եթե շուտ դիմեիք»: Դասախոսները մի շարք բուհերից այսպիսի պատասխան են ստացել. «Բարկացնում ու վիրավորում է, որ մեզ հետ մարդավարի չեն վարվել, ընդունված կարգով չեն ասել ազատման մասին, որպեսզի ես էլ կարողանայի իմ գլխի ճարը տեսնել ու այլ աշխատանք փնտրեի», եզրափակեց Կոխսեեւան:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Օրը տոնական է լինելու նաեւ Թեքեյանի անվան դպրոցներում


ՖՈՏՈԼՈՒՐ

Այսօր հանրապետության 1390 դպրոցներում եւ կրթական բոլոր հաստատություններում կհնչի 2010-2011 ուսումնական տարվա սկիզբը հայտարարող առաջին զանգը: Մեզանում առաջին անգամ հանրապետության 38.000 ուսուցիչներ ուսարվա առաջին օրը կընթերցեն «Երդման տեքստը», որը ՀՀ կրթության, գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանով մտցվեց կրթության բնագավառ: Շնորհավորելով ուսուցիչներին, աշակերտներին «Գիտելիքի օրվա» առիթով, մաղթում ենք, որ ուսումնական տարին լինի իրոք գիտելիքների ամբարելու ու խորացնելու տարի:

Այսօր վաղ առավոտից ուրախ եռուզեռը, ծաղկեփնջերով գեղեցիկ հագնված դպրոցականներն ու ուսանողները կշտապեն հարազատ կրթօջախ, որին ամառային հանգստի ընթացքում շատ են կարոտել: Կարոտով ու սպասումով են սեպտեմբերի 1-ին սպասում նաեւ հայ անվանի բանաստեղծ Վահան Թեքեյանի անունը կրող 5 կրթօջախներում, որտեղ սեպտեմբերի մեկը կնշեն յուրովի:

**«Ազգը»** «Գիտելիքի օրվա» առիթով շնորհավորելով բոլոր թեքեյանցիներին, նախապես տեղեկացավ միջոցառումների մասին եւ այն ներկայացնում ենք հաջորդաբար: Ստեփանավանի Վ. Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցի տնօրեն **Վոլոդյա Մարտիրոսյանը** տեղեկացրեց, որ այս տարի առաջին դասարան կհաճախեն 35 սան, որոնց տոնի առիթով ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանն ու ԱԺ պատգամավոր Սուրիկ Պողոսյանը նվիրել են պայուսակներ, գրենական պիտույք: Տնօրենի ողջույնի ու բարեմաղթանքի խոսքերից հետո դպրոցի ամենակրտսեր աշակերտը կհնչեցնի առաջին զանգը:

Գյումրիի թեքեյանցիներին կողջունի ու կշնորհավորի տոնի առիթով Շիրակի նորանշանակ մարզպետ Աշոտ Գիզիրյանը, որից հետո փողային նվագախմբի հնչյունների ներքո տեղի կունենա ուսուցիչների երդման արարողությունն ու տնօրեն Հովհաննես Պետրոսյանի ողջույնի խոսքը 80 առաջին դասարանցիներին, 64 ուսուցիչներին եւ դպրոցի բոլոր սաներին:

Նույն ժամին, Արագածոտնի մարզի Կարբի գյուղի Վ. Թեքեյանի անվան դպրոցի 900 աշակերտները ներկա կլինեն հանդիսավոր շքերթին եւ 50 առաջին դասարանցիների նորամուտին, որոնց կշնորհավորի դպրոցի տնօրեն Արսեն Օհանյանը, գյուղապետը, մարզի կրթության պատասխանատուներն ու 10-րդ դասարանցիները:

Իսկ ԼՂՀ-ի Բերձորի թեքեյանցիներին, որոնց թվում առաջին անգամ դպրոցական նստարանին իրենց տեղը կզբաղեցնեն 17 փոքրիկներ, «Գիտելիքի օրվա» միջոցառումը կբացվի քաղաքապետ Արտուշ Սահակյանի, Բերձորի կրթության բաժնի վարիչ Վարդան Բաղդասարյանի ողջույնի խոսքերով: Սեպտեմբերի 2-ին կրթօջախը կազմակերպել է հատուկ միջոցառումների շարք, նշեց տնօրեն Անահիտ Քոսակյանը, որոնք նվիրվում են Արցախի անկախության հռչակման 19-ամյակին եւ որին բազմաթիվ հյուրերի շարքում ներկա կլինեն նաեւ թեքեյանցիների հետ սերտ կապեր հաստատած հայկական բանակի Գորիսի զորամասի ներկայացուցիչները:

Երեւանի Վահան Թեքեյանի անվան կրթօջախում այսօրվա տոնական միջոցառմանը **«Ազգը»** կմասնակցի եւ կտեղեկացնի առաջիկա համարում:

Կրկին շնորհավորելով ուսումնական դարբնոցի քրտնաջան ու անձնուրաց մանկավարժներին, սաներին, մաղթում ենք գիտելիքների բարձունքները գրավեն ու մեր երկրին, պետությանը արժանի սերունդ կրթվեն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ



## ԵՊՀ ռեկտորի մտահոգությունները

Այս տարի Երեւանի պետական համալսարան ընդունվել են շուրջ 3000 դիմորդ: Դիմորդների քանակի առումով ԵՊՀ-ն դժվար թե բողոքներ ունենա, սակայն մասնագիտությունների առումով ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանը** մտահոգություններ ունի. «Կան բաժիններ, որտեղ ընդունվողների թվերը մեզ չեն կարող բավարարել, դա վերաբերում է հատկապես բնագիտական թեքին»: Օրինակ՝ ամբողջ աշխարհում զարգանում է էկոլոգիան, սակայն Հայաստանում այն ո՛չ զարգանում է, ո՛չ էլ հետաքրքրություն առաջացնում դիմորդների շրջանում: ԵՊՀ-ում բնագիտական մասնագիտությունների գծով դիմորդների թիվը տարեցտարի պակասում է: Երեկ ՄԱԱ-ում Արամ Սիմոնյանն անդրադարձավ նաեւ կոռուպցիայի հետ կապված խնդիրներին. «Բուհական համակարգը բնականաբար զերծ չէ կոռուպցիայից, որի դեմ պայքարելը բոլորիս գործն է»: Ռեկտորի խոսքով՝ կոռուպցիայի դեմ պայքարելը բավականին դժվար է, քանի որ մի կողմում բուհն է, իսկ մյուս կողմում կա մի զանգված, որը պատրաստ է իրականացնել իր ուզածը: ԵՊՀ ռեկտորի կարծիքով՝ կրթական ոլորտում անհանգստացնող խնդիր է նաեւ այն, որ մեր բուհերը չեն ստեղծել մենեջմենթի ու մարկետինգի մեխանիզմներ: Եթե անգամ նման մեխանիզմներ կան բուհերում, ապա թերի են ու չեն կարողանում միջազգային շուկա հանել տեղի գիտահետազոտական աշխատանքը:

Չնայած առկա խնդիրներին, ըստ ռեկտորի, գիտության ու գիտահետազոտական աշխատանքների ոլորտում առաջընթաց կա. «Վերջին տարիներին ունենում ենք գիտահետազոտական աշխատանքների կայուն թվաքանակ, հատկապես հայագիտության ոլորտում»:

Ինչ վերաբերում է թարգմանչական նորմալ դպրոց չունենալուն, այս հարցում, Ա. Սիմոնյանի խոսքով, մեղքի բաժին ունեն նաեւ բուհերը: Թարգմանչական նորմալ դպրոցի բացակայությունը իհարկե լուրջ խոչընդոտ է տեղի գիտական գրականությունը աշխարհին ներկայացնելու ճանապարհին:

**«Ազգի»** հարցին, թե զեղչերի հետ կապված ինչպիսի՞ փոփոխություններով է ԵՊՀ-ն դիմավորում նոր ուսումնական տարին, Արամ Սիմոնյանը նշեց, որ ԵՊՀ-ի զեղչային համակարգն ամենալիբերալներից է: Ա. Սիմոնյանը կոնկրետ փոփոխություններ չնշեց: Նրա խոսքով՝ ԵՊՀ-ի զեղչերը տարեկան կազմում են կես միլիոն դոլարից մի քիչ ավելի, իսկ ԵՊՀ-ի բյուջեն կազմում է շուրջ 6,5 միլիարդ դրամ, որի մեծ մասը ծախսվում է կրթական գործընթացների ու աշխատավարձերի վրա:

Վերջում բանախոսն անդրադարձավ նաեւ իր հրաժարականի մասին խոսակցություններին: Նա ընդգծեց, որ մինչեւ իր ժամկետի ավարտը մտադիր չէ հրաժարվել ռեկտորի պաշտոնից:

Ի. Պ.

## Կուլտուրայի ֆակուլտետն ուսանողներին դիմավորում է հիմնանորոգված մասնաշենքով

Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ուսանողները 2010-2011 ուսումնական տարում կսովորեն վերանորոգված շենքերում: Համալսարանի շենքերը նորոգվել ու բարեկարգվում են 2010 թվականի ընթացքում: Չնայած կուլտուրայի ֆակուլտետում երեկվա դրությամբ շինարարական աշխատանքները դեռեւս չէին ավարտվել, այնուամենայնիվ ֆակուլտետի փոխդեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու **Գեւորգ Թադեւոսյանի** փոխանցմամբ՝ սեպտեմբերի 1-ից ֆակուլտետը պատրաստ է ընդունելու ուսանողներին: Կուլտուրայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի **Ռոմելա Ավետիսյանը** պատմում է, որ բարձրացել է 2-րդ հարկ ու զարմացել՝ տեսնելով մաքուր ու բարեկարգված միջանցքը: Բարեկարգվել են ֆակուլտետի 3 հարկերն էլ: 3-րդ հարկում տեղակայված պարային մեծ դահլիճը պարարվեստի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու **Կարեն Գեւորգյանի** խոսքով՝ եզակի է Հայաստանում: Այն համապատասխանում է պարային պրոֆեսիոնալ դահլիճի բոլոր չափանիշներին: Բացի մեծ դահլիճից վերանորոգվել են նաեւ պարային 2 փոքր դահլիճները: Պարարվեստի բաժնի ուսանողուհի **Անի Ղազարյանը** պատմում է, որ նախկինում պարապել են քանդված հատակի վրա: «Տեղ-տեղ մանրահատակ էլ չկար խփած, այդ բաց տեղերը խանգարում էին պարելիս: Նախկինում մեծ դահլիճ չունեինք, միայն փոքր դահլիճներում էինք պարապում: Շատ անգամ տեղ չլինելու պատճառով խումբը կես-կես էր պարապում», ասում է Անին: Պարային բաժնի ուսանողները հիմա ունեն նաեւ նորոգված ու մեծ հանդերձարաններ: «Առաջ մի հանդերձարանում միաժամանակ 3 կուրս էր փոխվում», նշում է Անին:

Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի բաժինը դիմորդների շրջանում միշտ էլ մեծ հետաքրքրություն է առաջացրել:Նման հետաքրքրությունը, ըստ Կարեն Գեւորգյանի, առաջին հերթին պայմանավորված է դասախոսական պրոֆեսիոնալ կազմով: «Մեր համալսարանի կրթության մակարդակը շատ բարձր է: Պարարվեստի բաժնի ուսանողները սովորում են մասնագիտական 16 առարկաներ՝ պարարվեստի սիմվոլիկա, հայ պարարվեստի տեսություն ու մեթոդիկա, դասական պար, բալետմայստերի վարպետություն եւ այլն», ասում է Կ. Գեւորգյանը:

Միայն պարարվեստի բաժին այս տարի ընդունվել են 45 հոգի: Գեւորգ Թադեւոսյանը տեղեկացրեց, որ կուլտուրայի ֆակուլտետ այս տարի ընդունվել են շուրջ 280 հոգի: «Չեմ ասում կոնկրետ 280, որովհետեւ մինչեւ վարձերը չեն մուծում, չենք հավաստառամագրում», ասաց փոխդեկանը: Ամենաքիչ դիմորդներ ունեցել է ֆակուլտետի փողային եւ էստրադային նվագախմբի ղեկավարում բաժինը. 15 տեղի համար ընդամենը 8 հոգի են դիմել: Ավելի շատ դիմորդներ ունեցել են պարարվեստի, հեռուստալրագրության եւ ժող. գործիքների բաժինները:

Հիմնանորոգումից հետո կուլտուրայի ֆակուլտետի ուսանողները սովորելու են նաեւ 5 նոր լսարան-լաբորատորիաներում, որոնք են Կարեն Միրզախանյանի՝ ֆակուլտետի հիմնադրի անվան լսարանը, թանգարանագիտության, գրականագիտության, պարարվեստի մանկավարժության ու հեռուստալրագրության լսարանները: Գեւորգ Թադեւոսյանի փոխանցմամբ վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները կատարվել են ՀՊՄՀ-ի ֆինանսական միջոցներով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԳ Մարզական

# Վարդան Մինասյանը կատարեց իր ընտրությունը

*Ուսումնամարզական հավաքի է հրավիրվել 20 ֆուտբոլիստ*

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը օգոստոսի 30-ին սկսեց նախապատրաստությունը Եվրո-2012-ի ընտրական մրցախաղերին՝ մարզումներն անցկացնելով նորակառույց ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 3-ին հավաքականը Երեւանում հյուրընկալելու է Իռլանդիայի հավաքականին: Այդ հանդիպումը սկսվելու է ժամը 20-ին: Իսկ չորս օր անց մեր ֆուտբոլիստները Սկոպիեյի «Ֆիլիպ II» մարզադաշտում ուժերը կչափեն մակեդոնացիների հետ: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23-ին:

Ինչպես խոստացել էր հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը, առաջնության 19-րդ տուրից հետո նա վերջնականապես կողմնորոշվեց ֆուտբոլիստների հարցում եւ հրապարակեց վերջնական կազմը: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Գանձասարի» հետ խաղում վնասվածք էր ստացել «Միկայի» ձախ պաշտպան Աղվան Մկրտչյանը, որը չի կարող օգնել հավաքականին առաջիկա 2 հանդիպումներում: Բացի նրանից, նախորդ շաբաթ հրապարակված հավաքականի ընդլայնված կազմից դուրս են մնացել նաեւ Լեւոն Հայրապետյանը, Արտակ Ալեքսանյանը, Մասիս Ոսկանյանը, Արթուր Յուզբաշյանը, Արտակ Դաշյանը, Արտակ Գրիգորյանն ու Սամվել Մելքոնյանը: Նրանց մի մասը երիտասարդական հավաքականի թեկնածուներ են ու կարող են թիմին օգնել սեպտեմբերի 7-ին Վրաստանի երիտասարդական հավաքականի հետ կայանալիք ընտրական վերջին հանդիպման ժամանակ:

Աղվան Մկրտչյանի վնասվածքը որոշ խնդիրներ է առաջացրել հավաքականի պաշտպանության ձախ թեւում: Այդ դիրքում հավանաբար խաղա Արտակ Եդիգարյանը կամ Հովհաննես Համբարձումյանը: Վերջինիս խաղը շատ էր դուր եկել Վարդան Մինասյանին: Իսկ ահա «Բանանցի» հարձակվող Սամվել Մելքոնյանի գործողություններից հավաքականի գլխավոր մարզիչը դժգոհ է, ուստի վերջինս չի ընդգրկվել թիմի կազմում:



Պաշտպաններից առաջիկա խաղերին են նախապատրաստվում նաեւ հավաքականի փորձառու ավագ Սարգիս Հովսեփյանը, Ռոբերտ Արզումանյանը, Հրայր Մկոյանը, Արարատ Առաքելյանը:

Կիսապաշտպաններից ուսումնամարզական հավաքին մասնակցում են Կառլեն Մկրտչյանը, Դավիթ Մանոյանը, Արթուր Եդիգարյանը, Էդգար Մալաքյանն ու Լեւոն Փաչաջյանը: Թեեւ մարզման ժամանակ վնասվածք էր ստացել Գեւորգ Ղազարյանը, որը չմասնակցեց «Բանանցի» հետ վճռորոշ հանդիպմանը, սակայն նա հրավիրվել է հավաքական: Մարզումներին մասնակցում են նաեւ Հենրիխ Մխիթարյանը, Մարկոս Պիզելլին, Էդգար Մանուչարյանը, Յուրա Մովսիսյանն ու Հովհաննես Գոհարյանը:

Իսկ հավաքականի դարպասի պաշտպանությանը հավակնում են Ռոման Բերեզովսկին, Գեւորգ Կասպարովն ու Ստեփան Ղազարյանը:

# Ձակերոնին գլխավորեց «կապույտ սամուրայներին»



Իտալական «Միլանի» եւ «Յուվենտուսի» նախկին գլխավոր մարզիչ Ալբերտո Ձակերոնին գլխավորեց Ճապոնիայի ազգային հավաքականը: 57-ամյա մասնագետը 2 տարվա պայմանագիր է կնքել այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ: Նա կփոխարինի Տակեշի Օկադային, որի գլխավորությամբ ՀԱՀ-ում Ճապոնիայի հավաքականը կրկնեց ութամյա վաղեմության իր լավագույն արդյունքը՝ աշխարհի առաջնությունում հասնելով մինչեւ 1/8 եզրափակիչ, որտեղ միայն 11 մ հարվածներով զիջեց պարագվայցիներին: Չնայած դրան, Օկադան առաջնությունից հետո հայտարարել էր, որ ի վիճակի չէ ուժեղացնել հավաքականի խաղը, ուստի հեռանում է պաշտոնից:

Ճապոնիայի ֆուտբոլի ֆեդերացիան մի շարք թեկնածուների էր դիտարկում հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի համար: Նրանց թվում էին Խոսե Պեկերմանը, Մանուել Պելեգրինին, Մարկո վան Բաստենն ու Ռոնալդ Կումանը: Սակայն նրանցից եւ ոչ մեկի հետ չհաջողվեց համաձայնության գալ: Եվ ընտրությունը կանգ առավ Ձակերոնիի վրա, որն այդ պահին գործազուրկ էր:

Նախորդ մրցաշրջանում Ձակերոնին գլխավորում էր «Յուվենտուսը», սակայն չկարողացավ թիմին հաջողության հասցնել: «Յուվենտուսն» առաջնությունում ընդամենը 7-րդ տեղը գրավեց, ինչը 27 անգամ երկրի չեմպիոնի տիտղոսը նվաճած թիմի համար անհաջողություն է: Ճիշտ է, Ձակերոնին թիմի ղեկը ստանձնել էր մրցաշրջանի կեսին, երբ «Յուվենտուսն» արդեն ձախողվել էր ու խաղային ճգնաժամ էր ապրում: Մինչեւ «Յուվենտուսը» գլխավորելը, Ձակերոնին մարզել էր «Ինտերը», «Միլանը», «Լացիոն», «Թորինոն» եւ «Ուդինեզեն»: Հենց վերջինիս հետ էլ 1997/98-ին մարզիչն իր առաջին նշանակալի հաջողությանն է հասել՝ թիմի հետ նվաճելով բրոնզե մեդալները: Իսկ թիմի գերմանացի հարձակվող Օլիվեր Բիրհոֆը 27 գոլով ճանաչվել էր առաջնության լավագույն ռմբարկու: Այդ հաջողության համար Ձակերոնիին հրավիրեցին «Միլան»: Հենց այս թիմում էլ իտալացի մասնագետն իր ամենամեծ հաջողությանն է հասել՝ 1998/99-ին թիմին հասցնելով չեմպիոնական բարձունքին:

Ձակերոնին առաջին անգամ է հավաքականի ղեկը ստանձնում: Նա դարձավ Ճապոնիայի հավաքականի օտարերկրացի 6-րդ մարզիչը: Նրանից առաջ լեգենդականի կարգավիճակով ճապոնացիներին մարզել են հոլանդացի Հանս Օֆտը (1992-1993-ին), բրազիլացիներ Ֆալկաոն (1994-ին) եւ Զիկոն (2002-2006-ին), ֆրանսիացի Ֆիլիպ Տրուսյեն (1998-2002-ին) եւ բոսնիացի Իվիցա Օսիմը (2006-2007-ին): Առավել հաջողակ է գտնվել Տրուսյեն, որի գլխավորությամբ ճապոնացիները 2002-ի աշխարհի առաջնությունում մտել են 1/8 եզրափակիչ:

## ՀԱՄԱՌՈՏ

### Վերջին մասնակիցն էլ կյանքից հեռացավ

**100 տարեկանում մահացել է Արգենտինայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Ֆրանցիսկո Վարալոն: Նա 1930-ի աշխարհի անդրանիկ առաջնության մասնակիցներից վերջինն էր, որ դեռեւս ողջ էր:**

### Իռլանդացիները կորուստներ են կրում

**Ֆուտբոլի Իռլանդիայի հավաքականը, որը սեպտեմբերի 3-ին Երեւանում կմրցի Հայաստանի ընտրանու հետ, կորուստներ կրեց Անգլիայի առաջնության հերթական տուրից հետո: Վնասվածքի պատճառով Երեւան չի ժամանի «Ֆուլհեմի» 31-ամյա կիսապաշտպան Դամյեն Դաֆը: Իռլանդացիներին չի կարող օգնել նաեւ «Բլեքբյոռնի» 29-ամյա հարձակվող Քեյթ Էնդրյուսը, որը դեռ չի ապաքինվել ծանր վնասվածքից:**

### Ռուդիշան նոր ռեկորդ սահմանեց

**Քենիացի վազորդ Դավիթ Ռուդիշան գերազանցեց 800 մետր վազքի իրեն պատկանող համաշխարհային ռեկորդը: Իտալիայում անցկացված մրցումներում նա մրցատարածությունը հաղթահարեց 1.41,01 րոպեում: Նախկին ռեկորդը Ռուդիշան սահմանել էր Բեռլինում մեկ շաբաթ առաջ (1.41, 09)՝ գերազանցելով դանիացի հանրահայտ վազորդ Ուիլսոն Կիպկետերի համաշխարհային նվաճումը (1.41,11):**

## ԱՅՑ

# Միշել Պլատինին կժամանի Երեւան

**Նոր ուսումնական տարվա առաջին օրը լավ նվեր կստանան ֆուտբոլային աշխարհի ներկայացուցիչները: Ավանում կբացվի ֆուտբոլի նորակառույց ակադեմիան: Բացման հանդիսավոր արարողությանը մասնակցելու նպատակով այսօր Երեւան կժամանի ՈւԵՖԱ-ի պատվիրակությունն այդ կազմակերպության նախագահ Միշել Պլատինիի գլխավորությամբ: Միջոցառմանը ներկա է լինելու նաեւ հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Արարողությունից հետո Միշել Պլատինին եւ ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը համատեղ մամուլի ասուլիսի կմասնակցեն:**

**Ավանում կառուցված մարզական խոշոր համալիրն արդեն հյուրընկալել է իր առաջին հյուրերին: Այստեղ ուսումնամարզական հավաքն են սկսել Հայաստանի ազգային եւ երիտասարդական հավաքականները:**

## Անդրեասյանը պահպանեց առաջատարի դիրքը

**Սալոնիկի շախմատի մրցաշարի 7-րդ տուրում, ըստ մրցումների պաշտոնական կայքի, Զավեն Անդրեասյանը ոչ-ոքի խաղաց Իոաննիս Նիկոլաիդիսի հետ: Մյուս առաջատարը՝ թուրք Սուաթ Աթալիկը եւս կես միավոր վաստակեց՝ հաշտություն կնքելով Դիմիտրիոս Մաստրովասիլիսի հետ: 7 տուրից հետո 5,5 միավորով աղյուսակը շարունակում են գլխավորել Անդրեասյանն ու Աթալիկը: Մրցաշարի նախավերջին տուրում Անդրեասյանը սպիտակներով կխաղա բուլղարացի Մարիջան Պետրովի, իսկ Աթալիկը սեւերով կմրցի բուլղարացի մեկ այլ գրոսմայստերի՝ Ջուլիան Ռադուլսկու հետ:**

**Տուրը հաջող էր Վահե Բաղդասարյանի համար, որը սեւերով հաղթեց Աս Ասիմենիոսին ու վաստակելով 4,5 միավոր, մոտեցավ առաջատարներին: Իսկ ահա Աղասի Ինանցը պարտվեց Օդիսեւս Կեսիդիսին ու 3 միավորով 68 մասնակիցների մեջ զբաղեցրեց 38-րդ տեղը:**

## Քոթանջյանը հաջող է մեկնարկել

**Ֆիլիպիններում մեկնարկել է ՖԻԴԵ-ի նախկին նախագահ Ֆլորիան Կամպոմանեսի անդրանիկ հուշամրցաշարը, որի 72 մասնակիցների թվում է Տիգրան Քոթանջյանը: Հայ շախմատիստն իր վարկանիշով (2551) 15-րդն է: Ամենաբարձր վարկանիշն ունի վիետնամցի Լիեմ Լե Քուանգը (2681):**

**Առաջին չորս տուրերում Քոթանջյանը 3 միավոր է վաստակել: Նա մրցաշարը սկսեց ֆիլիպինցի Ռոբել Լեգասպիի նկատմամբ տոնած հաղթանակով, ապա հաշտություն կնքեց հնդիկ շախմատիստուհի Ռութ Պադմինիի եւ ֆիլիպինցի Ռանդու Սեգերայի հետ: 4-րդ տուրում Տիգրանը պարտության մատնեց ֆիլիպինցի Դենիել Կաուսոյին: Քոթանջյանն ընթանում է 15-րդ տեղում:**

**4 միավորով աղյուսակը գլխավորում է չինացի Զուն Ժաոն: Ֆիլիպինցի Վեսլի Սոն եւ վրացի Մերաբ Գագունաշվիլին ունեն 3,5-ական միավոր:**

## Հաջողությունն ուղեկցեց Գելֆանդին

**Միշկոլցում անցկացվեց արագ շախմատի մրցախաղ իսրայելցի Բորիս Գելֆանդի եւ հունգարացի Պետեր Լեկոյի միջեւ: 4,5-3,5 հաշվով հաղթեց Բորիս Գելֆանդը, որն աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարում Լեւոն Արոնյանի մրցակիցն է:**

**Մրցախաղի առաջին կեսում հաշիվը հավասար էր: Գելֆանդը հաղթել էր մեկնարկային տուրում, իսկ Լեկոն հաջողության էր հասել 4-րդ պարտիայում: 5-րդ պարտիայում Գելֆանդը 2-րդ հաղթանակը տոնեց, որն էլ վճռեց մրցախաղի ելքը, քանի որ մնացած 3 հանդիպումներն ավարտվեցին ոչ-ոքի:**

## Առաջատարներն ի հայտ են եկել

**Թուրքիայում ընթացող բասկետբոլի տղամարդկանց աշխարհի առաջնությունում ի հայտ են եկել խմբային մրցաշարի առաջատարները: Մասնակից 24 հավաքականները բաժանվել են չորս խմբի: A խմբում առաջատարն Արգենտինայի ընտրանին է, որը տոնել է 3 անընդմեջ հաղթանակ (Գերմանիա՝ 78-74, Ավստրալիա՝ 74-72, Անգոլա՝ 91-70):**

**B խմբում էլ առայժմ առանց միավորի կորուստի են ընթանում ամերիկացիները: Նրանք հաղթել են Խորվաթիայի (106-78), Սլովենիայի (99-77) եւ Բրազիլիայի (70-68) հավաքականներին: C խմբում հաջող են մեկնարկել թուրքերն ու հույները, որոնք 2-ական հաղթանակ են տոնել: Այս խմբում հանդես եկող Ռուսաստանի հավաքականը մեկնարկեց Պուերտո Ռիկոյի ընտրանու նկատմամբ տոնած հաղթանակով (75-66), սակայն 2-րդ խաղում զիջեց թուրքերին (56-65): D խմբում 2-ական հաղթանակ են տոնել Ֆրանսիայի եւ Լիտվայի բասկետբոլիստները:**

## Հեմիլտոնի առաջին հաջողությունը Բելգիայում

**«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության 13-րդ փուլն անցկացվեց Բելգիայում: Մրցումներն ուղեկցվեցին բոլիդների մի շարք բախումներով: Ամենահաջողակը «Մակլարենի» ավտոմրցարշավորդ Լյուիս Հեմիլտոնն էր, որն էլ ցույց տվեց լավագույն արդյունքը: 2-րդ տեղը գրավեց Մարկ Ուեբերը («Ռեդ Բուլ»), 3-րդ տեղում Ռոբերտ Կուբիցան էր («Ռենո»):**

**Առաջին անգամ հաղթող ճանաչվելով Բելգիայի Գրան պրիի խաղարկությունում, Հեմիլտոնը գլխավորեց ընդհանուր հաշվարկով մրցաշարային աղյուսակը: Նա վաստակել է 182 միավոր: 2-րդ տեղում Ուեբերն է (179): Եռյակը եզրափակում է Սեբաստիան Ֆետելը (151):**

**«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առջեւից է ընթանում «Ռեդ Բուլը» (330 միավոր), որին ընդամենը մեկ միավոր է զիջում «Մակլարենը»: 250 միավորով 3-րդ տեղում «Ֆերարին» է:**

## «Ունիրյայի» սեփականատերը որոշել է ցրել թիմը

Ռումինական «Ունիրյա» ակումբի սեփականատեր Դումիտրու Բուկշարուն որոշել է ցրել թիմը եւ ֆուտբոլիստների փոխարեն տեղի ֆուտբոլի դպրոցների սաներին հրավիրել: Այս որոշման պատճառն այն է, որ չեմպիոնների լիգայի որակավորման փուլում «Զենիթին» պարտվելուց հետո սկսվեց «Ունիրյայի» ֆուտբոլիստների արտահոսքը թիմից:

Երկու տարի առաջ «Ունիրյան» նվաճել էր Ռումինիայի չեմպիոնի տիտղոսը, անցյալ տարի դարձել էր արծաթե մեդալակիր: Իսկ այժմ որոշել են ամեն ինչ սկսել նորից: Արդեն 11 ֆուտբոլիստ ազատ խաղացողի կարգավիճակով հեռացել է թիմից, մոտ օրերս եւս 13-ը կլքեն «Ունիրյան», որը Ռումինիայի առաջնությունում ընթանում է 11-րդ տեղում:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Ծանուցում

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

| Ծածկագիր | Մասնագիտություն | Ընդունելության քննություններ | | | | ընդ. տեղ | վարձ (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային | | | Ոչ մրցութային | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 01 | **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ** | | | | | **1045** | |
| 010100 | Մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 10 | 200 |
| 011000 | Ակտուար մաթեմատիկա | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 15 | 280 |
| 010400 | Ինֆորմատիկա եւ կիրառական մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 15 | 280 |
| 010600 | Ֆիզիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 10 | 200 |
| 011200 | Ռադիոֆիզիկա եւ էլեկտրոնիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 10 | 200 |
| 020900 | Էկոլոգիական քիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 10 | 200 |
| 021000 | Դեղագործական քիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 30 | 320 |
| 020300 | Երկրաբանություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլ(գ)* | 25 | 200 |
| 020200 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 20 | 200 |
| 020400 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 20 | 200 |
| 020500 | Քարտեզագրություն եւ կադաստրային գործ | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 20 | 280 |
| 100100 | Սերվիս | Ա(գ) կամ ՀԺՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 30 | 240 |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլ(գ) | | 70 | 220 |
| 031500 | Արվեստաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 25 | 260 |
| 031400 | Մշակութաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 20 | 260 |
| 030700 | Միջազգային հարաբերություններ | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 70 | 400 |
| 030200 | Քաղաքագիտություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 70 | 360 |
| 032000 | Հանրային կառավարում | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 60 | 360 |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 80 | 380 |
| 081800 | Կառավարում | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 40 | 380 |
| 030300 | Հոգեբանություն | Կ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | | 35 | 320 |
| 040100 | Սոցիալական աշխատանք | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 15 | 260 |
| 031000 | Հայոց լեզու եւ գրականություն | Հլգ(բ) | Հլ(գ) | ՀԺՊ(գ) կամ Օտլ(գ) | | 80 | 200 |
| 030600 | Լրագրություն | Սմ(գ) | Հլգ(բ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | Հլ(գ) | 30 | 240 |
| 032400 | Ռուսաց լեզու եւ գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | Հլ(գ) | | 40 | 240 |
| 031300 | Անգլերեն լեզու եւ գրականություն | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլ(գ) | | 90 | 360 |
| 031300 | Իսպաներեն լեզու եւ գրականություն | Օտլ(բ) կամ ԻՍ(բ) | Օտլ(գ) կամ ԻՍ(գ) | Հլ(գ) | | 30 | 360 |
| 030500 | Իրավագիտություն | Հլ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) | | 55 | 560 |
| 031900 | Աստվածաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 20 | 220 |

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են 2010թ. օգոստոսի 3-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը:
Ընդունելության քննություններն անցկացվում են 2010թ. սեպտեմբերի 25-ից մինչեւ հոկտեմբերի 20-ը:
***ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ`***

ARDSHININVESTBANK

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ (ի փոփոխումն 2010թ. օգոստոսի 28-ի «Ազգ» օրաթերթի թիվ 155 (4535) համարի 8-րդ էջում տպագրված հայտարարության)

**«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի մրցույթ**

«Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է մրցույթ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտն իրականացնելու նպատակով:

Մրցույթին կարող են մասնակցել այն աուդիտորական կազմակերպությունները, որոնք բավարարում են հետեւյալ չափանիշներին`

1) ունեն միջազգային ճանաչում.

2) բանկերում աուդիտորական աշխատանքի առնվազն 5 տարվա փորձ.

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն նաեւ հետեւյալ տեղեկատվությունը.

ա) աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների աշխատանքային փորձը.

բ) աուդիտի ընդգրկման բնագավառները.

գ) աուդիտի իրականացման եւ աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները (ներառյալ նախնական աուդիտի անցկացման ժամկետները).

դ) աուդիտի իրականացման ընդհանուր գինը (ներառյալ բոլոր տեսակի հարկերը եւ այլ ծախսերը).

ե) լրացուցիչ այլ տեղեկություններ:

Մրցույթի պայմաններն են`

1) Աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների (ներառյալ` աուդիտն իրականացնող խմբի ղեկավարը) առնվազն 30%-ը պետք է ունենան միջազգային հաշվապահական որակավորում (ԷյՍի-Սի-Էյ, Փի-Սի-Էյ եւ այլն) եւ բանկերում առնվազն 3 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ:

2) Աուդիտորական եզրակացությունը եւ «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով, ընդ որում, երեք լեզուներով կազմված փաստաթղթերն էլ պետք է ունենան միեւնույն իրավաբանական ուժ եւ ներկայացվեն ոչ ուշ, քան 2011 թվականի մարտի 31-ը ներառյալ:

3) Մրցութային առաջարկները` Տեխնիկական եւ Ֆինանսական հայտերը առանձին փակ ծրարներով մեկ կնքված փաթեթով , հայերեն լեզվով պետք է Բանկ ներկայացվեն **մինչեւ 2010թ. սեպտեմբերի 10-ը ներառյալ ժամը 17:30.**

4) աուդիտն պետք է կատարվի Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

Մրցութային առաջարկները կքննարկվեն մրցութային հանձնաժողովի կողմից 2010թ. սեպտեմբերի 14-ին, ժամը 17:00-ին, Բանկի գլխավոր գրասենյակում` ք. Երեւան, Գրիգոր Լուսավորչի 13 հասցեում եւ մրցույթի մասնակիցները` վերջիններիս ցանկությամբ, կարող են ներկա գտնվել փաթեթների բացման գործընթացին: Մրցույթի մասնակիցները գրավոր կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին մինչեւ 2010թ. սեպտեմբերի 20-ը ներառյալ: Մրցույթի անցկացման ամսաթվի եւ ժամի փոփոխության դեպքում կկատարվի լրացուցիչ հրապարակային ծանուցում:

Մրցույթում հաղթող ճանաչված անկախ աուդիտորական կազմակերպության հետ, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաղթող ճանաչված անձ հաստատվելուց հետո, պայմանագիրը կկնքվի տասնհինգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչեւ 2010 թվականի հոկտեմբերի 15-ը, որի մասին գրավոր ծանուցում կներկայացվի հաղթողին:

31.08.2010թ. դրությամբ «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ունի 55 մասնաճյուղ եւ մեկ ներկայացուցչություն Փարիզում:

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ կողմից անկախ աուդիտորական կազմակերպության մրցույթով ընտրության կարգին (մրցույթի ձեւ, անցկացման կարգ, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ եւ այլ տեղեկությունների վերաբերյալ) կարող եք ծանոթանալ Բանկի ինտերնետային կայքի «Հայտարարություններ» բաժնում տեղադրված սույն հայտարարության վերջնամասից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել.

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ. ք. Երեւան, Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 13, 305 սենյակ, կամ զանգահարել 59 04 44, 59-04-43 հեռախոսահամարով: Ինտերնետային կայք` **www.ashib.am**: Էլեկտրոնային հասցե` M.Sahakyan@ashib.am:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2010 թվական 2-րդ եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ

| | | | | |
|---|---|---|---|---|
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,911,262,478.59 | ԱՄՆ | դոլար |
| այդ թվում` | | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,911,261,880.82 | ԱՄՆ | դոլար |
| որից` | | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 77,946,568.60 ՀՓԻ | 118,341,668.87 | ԱՄՆ | դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ | դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,256,767,387.65 | ԱՄՆ | դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,256,766,789.87 | ԱՄՆ | դոլար |

Եռամսյակի վերջ

| | | | | |
|---|---|---|---|---|
| I.Համախառն արտաքին ակտիվներ | | 1,786,924,293.66 | ԱՄՆ | դոլար |
| այդ թվում` | | | | |
| միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով) | | 1,786,923,712.83 | ԱՄՆ | դոլար |
| որից` | | | | |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 29,381,473.00 ՀՓԻ | 43,452,147.36 | ԱՄՆ | դոլար |
| պահուստային դիրք ԱՄՀ-ում | 0.00 ՀՓԻ | 0.00 | ԱՄՆ | դոլար |
| II.Զուտ արտաքին ակտիվներ | | 1,135,972,668.57 | ԱՄՆ | դոլար |
| որից` ազատ փոխարկելի արժույթով | | 1,135,972,087.73 | ԱՄՆ | դոլար |

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

## ԵԹԵ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ ծանոթանալ ժուռնալիստիկայի այբուբենին, ԴԻՄԵՔ

Հայաստանի ժուռնալիստների միության պատանի ժուռնալիստի դպրոց, որը գործում է 1973 թվականից, ժուռնալիստի տանը` Պուշկինի 3ա հասցեում:

Դպրոց կարող են ընդունվել հանրակրթական դպրոցների ժուռնալիստական հակումներ ունեցող բարձր դասարանցիներ եւ շրջանավարտներ:

Դասերը վարում են հանրապետության լավագույն մասնագետները:

Ուսման տեւողությունը` մեկ տարի: Դասերը շաբաթը մեկ անգամ` երեքշաբթի օրը, ժամը 15.00-ին:

Ուսուցումն անվճար է: Ավարտողները կստանան վկայագիր:

Դիմումները /1 լուսանկար 3x4 չափի, ինքնակենսագրություն, ստեղծագործական շարադրություն/ ընդունվում են ամեն օր, ժամը 12-16-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, մինչեւ **սեպտեմբերի 24-ը**:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել **56-12-76, 56-14-47** հեռախոսահամարներով:

## ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը օգոստոսի 31-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ **Արթուր Ջավադյանը**, հաստատեց «Ֆինանսական կազմակերպությունների (բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների) եւ հաշվետու թողարկողների կողմից աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշները»: Լրացումներ եւ փոփոխություններ կատարվեցին «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի եւ դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում: Խորհուրդը փոփոխություններ կատարեց «Տեխնիկական պահուստների տեսակները, դրանց ձեւավորման կարգը» կանոնակարգ 3/03-ում:

Խորհուրդը վերաձեւակերպեց «ԿԱՐՄԵՆ» արտադրական կոոպերատիվի գրավատան լիցենզիան եւ Արեն Շահումարյանի փոխանակման կետի թիվ 726 արտարժույթի առուվաճառքի լիցենզիան: Արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիաներ տրամադրվեցին «Փեթակ» ՍՊԸ-ին եւ «ՍԹԱՐ ԴԻՎԱՅԴ» ՓԲԸ-ի թիվ 7 մասնաճյուղին, «ՖԱՍՏ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ն ստացավ գրավատան կազմակերպման լիցենզիա:

Խորհրդի որոշմամբ «Լոնդոն-Երեւան ԿՕ» ԱՍՊԸ-ին լուծարման թույլտվություն տրվեց եւ ընկերության լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչվեցին: Ուժը կորցրած ճանաչվեցին նաեւ «ԷՄ ՋԻ ՓԵՅ» ՓԲԸ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության եւ վճարային գործիքների եւ վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ եւ քլիրինգ իրականացնող կազմակերպության թիվ 6 եւ 10 լիցենզիաները եւ «ՍԹԱՐՎՈՒԴ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 095 լիցենզիան:

**ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 31.08.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: